# ՔԱՂՎԱԾՔ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ
# ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
# Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

**Հոդված 17. Գործի արդարացի քննությունը**

1. Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք:

2. Դատավորը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմնի աշխատակիցը չեն կարող մասնակցել քրեական գործով վարույթին, եթե նրանք ուղղակի կամ անուղղակի շահագրգռված են գործի ելքով:

3. Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

4. Կասկածյալի, մեղադրյալի և նրանց պաշտպանի հայտարարություններն իրենց անմեղության, կասկածյալին կամ մեղադրյալին արդարացնող, իրենց պատասխանատվությունը մեղմացնող ապացույցների առկայության մասին, ինչպես նաև քրեական դատավարության ընթացքում օրինականության խախտումների վերաբերյալ բողոքները պետք է մանրակրկիտ ստուգի քրեական վարույթն իրականացնող մարմինը:

***(17-րդ հոդվածը լրաց. 28.11.07 ՀՕ-270-Ն)***

**Հոդված 18. Անմեղության կանխավարկածը**

1. Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

2. Կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Նրանց անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա: Մեղադրանքի ապացուցման և կասկածյալին կամ մեղադրյալին ի պաշտպանություն բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը:

3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

4. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի:

5. Կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցները չեն կարող պարունակել պատժի տարրեր:

**Հոդված 25. Ապացույցների ազատ գնահատումը**

1. Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ:

2. Քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում:

**Հոդված 52. Դատախազը**

1. Դատախազն օրենքով սահմանված կարգով նշանակված պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում իրականացնում է քրեական հետապնդում, հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը, մասնակցում է դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցերի քննարկմանը, բողոքարկում է դատարանի դատավճիռները և այլ վերջնական որոշումները: Դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը կոչվում է մեղադրող:

2. Դատախազը պարտավոր է մեղադրյալի կամ վերջինիս գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձի դեմ հայց հարուցել ի պաշտպանություն պետության գույքային շահերի:

Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, եթե դատապարտյալը եռամսյա ժամկետում չի դիմում դատարան դատական ակտի վերանայման նպատակով, ապա դատախազը եռամսյա ժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, համապատասխան միջնորդություն է ներկայացնում դատարան:

Նախկինում մահապատժի դատապարտված անձանց վերաբերյալ դատական կարգով չվերանայված դատական ակտերը վերանայելու նպատակով դատախազը համապատասխան միջնորդություն է ներկայացնում դատարան մինչև 2006 թվականի օգոստոսի 1-ը:

3. Քրեական գործի վարույթով իր լիազորություններն իրականացնելիս դատախազն ինքնուրույն է որոշումներ ընդունում՝ հիմնվելով օրենքների և ներքին համոզմունքի վրա, և պատասխանատու է իր ընդունած որոշումների համար:

4. Ստորադաս դատախազը պարտավոր է կատարել վերադաս դատախազի բոլոր գրավոր ցուցումները, բացառությամբ սույն հոդվածի հինգերորդ մասով նախատեսված դեպքի, ինչպես նաև այն դեպքի, երբ դատախազը համարում է, որ ցուցումն անօրինական է: Վերադաս դատախազի կողմից տրված ցուցումը անօրինական համարելու դեպքում դատախազը պարտավոր է, իսկ ցուցումը

անհիմն համարելու դեպքում կարող է այն բողոքարկել ցուցում տված դատախազի վերադասին:

5. Հետաքննության կամ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս դատախազը պարտավոր է կատարել վերադաս դատախազի գրավոր ցուցումը, բացառությամբ այն դեպքերի, երբ համարում է, որ նման ցուցումն անհիմն կամ անօրինական է: Նման դեպքերում հսկողություն իրականացնող դատախազը պարտավոր է հրաժարվել այն կատարելուց՝ անհապաղ գրավոր իրազեկելով ցուցում տված վերադաս դատախազին, որն իրավունք ունի անձամբ ստանձնելու հսկողությունը կամ դրա իրականացումը հանձնարարելու մեկ այլ դատախազի:

***(52-րդ հոդվածը լրաց. 01.06.06 ՀՕ-121-Ն, 13.06.06 ՀՕ-67-Ն, խմբ., լրաց. 22.02.07 ՀՕ-129-Ն)***

**Հոդված 53. Դատախազի լիազորությունները մինչդատական վարույթում**

1. Դատախազը մինչդատական վարույթի ընթացքում լիազորված է՝

1) հարուցել և իրականացնել քրեական հետապնդում, վերացնել քննիչի կայացրած որոշումը քրեական գործը կարճելու մասին, դատարանի միջնորդության հիման վրա հարուցել քրեական գործ, վերացնել հետաքննության մարմնի և քննիչի որոշումը քրեական գործի հարուցումը մերժելու մասին և հարուցել քրեական գործ, ինչպես նաև իր նախաձեռնությամբ հարուցել քրեական գործ.

2) ***(կետն ուժը կորցրել է 22.02.07 ՀՕ-129-Ն)***.

3) հանցագործության դեպքով հետաքննության մարմնին և քննիչին հանձնարարել նախապատրաստել նյութեր քրեական գործ հարուցելու համար.

4) հետաքննության մարմնին և քննիչին հանձնարարել կատարելու անհետաձգելի քննչական գործողություններ.

5) ***(կետն ուժը կորցրել է 28.11.07 ՀՕ-270-Ն)***

6) հետաքննության և նախաքննության նկատմամբ իրականացնել դատավարական ղեկավարում:

2. Նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելով՝ դատախազի բացառիկ լիազորությունն է՝

1) ստուգել կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման մասին օրենքի պահանջների կատարումը հետաքննության մարմնի կողմից.

2) ստուգման համար հետաքննության մարմնից, քննիչից պահանջել նյութեր, փաստաթղթեր, քրեական գործեր և քննության ընթացքի մասին տեղեկություններ, ինչպես նաև ծանոթանալ դրանց կամ դրանք ստուգել նրանց գտնվելու վայրում.

3) ցանկացած քրեական գործ վերցնել հետաքննության մարմնից և հանձնել նախաքննության մարմնին, քրեական գործը սույն օրենսգրքի 190 հոդվածով սահմանված նախաքննության մի մարմնից հանձնել նախաքննության մեկ այլ մարմնին՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու նպատակով.

4) անհրաժեշտության դեպքում քննչական բաժնի պետին գրավոր ցուցում տալ գործի քննությունը քննչական խմբի կողմից կատարելու վերաբերյալ, ինչպես նաև ցուցում տալ նախաքննություն իրականացնող տարբեր մարմինների քննչական բաժինների պետերին՝ այդ մարմինների քննիչներից ստեղծված քննչական խմբում ներառելու վերաբերյալ:

Հատուկ քննչական ծառայության քննիչները կարող են ներգրավվել միայն տվյալ ծառայությանը ենթակա քրեական գործերի քննության համար ստեղծված քննչական խմբերում.

5) լուծել հետաքննության մարմնի աշխատակցին, քննիչին, ստորադաս դատախազին հայտնված բացարկի, ինչպես նաև վերջիններիս ինքնաբացարկի հարցերը.

6) հետաքննության մարմնին, քննիչին գրավոր ցուցումներ տալ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու, որոշումներ ընդունելու վերաբերյալ.

7) լուծել հետաքննության մարմնի կամ նրա աշխատակցի և քննիչի՝ սույն օրենսգրքով նախատեսված առարկությունները՝ դատավարական ղեկավարում իրականացնող ստորադաս դատախազի ցուցումների վերաբերյալ.

8) գործի քննության օրինականությունն ապահովելու նպատակով հսկողություն իրականացնող դատախազին տալ գրավոր ցուցումներ.

9) լուծել հետաքննության մարմնի, քննիչի որոշումների և գործողությունների դեմ բերված բողոքները, բացառությամբ այն բողոքների, որոնց լուծումն օրենքով վերապահված է դատարանին.

10) հետաքննության մարմնի աշխատակցին, քննիչին հեռացնել տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցելուց, եթե գործի քննության ընթացքում նրանք թույլ են տվել օրենքի խախտում.

11) դիմել համապատասխան մարմիններ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձանց կալանավորման հարցը լուծելու, քրեական պատասխանատվության ենթարկելու միջնորդություններով, եթե այդ անձինք քրեական գործով պետք է ներգրավվեն որպես մեղադրյալ.

12) վերադարձնել քրեական գործերը քննիչին՝ լրացուցիչ քննություն կատարելու համար պարտադիր ցուցումներով.

13) վերացնել հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը քրեական գործով վարույթը կարճելու մասին, ինչպես նաև նրանց այլ որոշումներ՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում.

14) հաստատել մեղադրական եզրակացությունը, իսկ այն անձանց նկատմամբ քրեական գործերով, որոնք քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարել են անմեղսունակ վիճակում կամ անմեղսունակ են դարձել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարելուց հետո՝ եզրափակիչ որոշումը.

15) գործն ուղարկել դատարան՝ ըստ էության քննելու համար:

3. Նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելիս դատախազն իրավասու է նաև՝

1) ***(կետն ուժը կորցրել է 28.11.07 ՀՕ-270-Ն)***

2) իր իրավասության շրջանակներում հետաքննության մարմնից տեղեկություններ ստանալ օպերատիվ-հետախուզական գործունեության

իրականացման և հանցագործությունների բացահայտման, անհայտ կորած անձանց և կորած գույքի հայտնաբերման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին.

3) պահանջել փաստաթղթեր, նյութեր և գործեր, որոնք կարող են տեղեկություններ պարունակել դեպքերի և դրանց առնչվող անձանց մասին.

4) հետաքննության մարմնին պարտադիր գրավոր ցուցումներ տալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման մասին՝ կապված քրեական գործով վարույթի հետ.

5) դիմել դատարան՝ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանի խուզարկության միջնորդություններով.

6) հրաժարվել մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց, կարճել քրեական գործով վարույթը կամ դադարեցնել քրեական հետապնդումը.

7) հետաքննության մարմնին՝ հանձնարարել իրականացնել ձերբակալման, բերման ենթարկելու, կալանավորման, այլ դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ որոշումները.

8) միջոցներ ձեռնարկել տուժողի, վկայի և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանց պաշտպանության համար.

9) դիմել դատարան՝ սույն օրենսգրքով նախատեսված միջնորդություններով.

10) ազատել առանց օրինական հիմքերի կամ առանց անհրաժեշտության ձերբակալված կամ կալանավորված անձանց.

11) անհրաժեշտությունը վերանալու դեպքում վերացնել նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակումները:

4. Քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում դատախազն իրականացնում է նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ լիազորություններ:

*(53-րդ հոդվածը փոփ., լրաց. 25.05.06 ՀՕ-91-Ն, փոփ., խմբ. 22.02.07 ՀՕ-129-Ն, փոփ., խմբ. 28.11.07 ՀՕ-270-Ն)*

**Հոդված 54. Դատախազի լիազորությունները քրեական գործը կամ նյութը դատարանում քննելիս**

1. Քրեական գործը դատարանի կողմից քննելիս մեղադրողը լիազորված է՝

1) հայտնել բացարկներ.

2) հարուցել միջնորդություններ.

3) կարծիք հայտնել դատավարության մյուս մասնակիցների հարուցած միջնորդությունների վերաբերյալ.

4) ներկայացնել ապացույցներ, հետաքննության մարմնին նրա համար պարտադիր հանձնարարություններ տալ ապահովելու դատարանին ապացույցներ ներկայացնելը.

5) մասնակցել գործի նյութերի հետազոտմանը.

6) բողոքել մյուս կողմի անօրինական գործողությունների դեմ.

7) առարկել նախագահողի անօրինական գործողությունների դեմ.

8) պահանջել դատական նիստի արձանագրության մեջ գրառումներ կատարելու իր նշած հանգամանքների մասին.

9) հրաժարվել մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց.

10) դատարանում հրապարակել մեղադրական եզրակացությունը, առաջին ատյանի և վերաքննիչ դատարանում հանդես գալ ճառով և ռեպլիկով, իսկ վճռաբեկ դատարանում՝ ներկա գտնվել նիստին.

11) բողոքարկել դատարանի դատավճիռները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ դատարանի այլ որոշումներ.

12) օգտվել սույն օրենսգրքով նախատեսված այլ լիազորություններից:

2. Դատարանի նիստին մասնակցող դատախազը պարտավոր է՝

1) ենթարկվել դատարանի նիստում սահմանված կարգ ու կանոնին և նախագահողի օրինական կարգադրություններին.

2) կատարել սույն օրենսգրքով նախատեսված այլ պարտականություններ:

3. Դատարանի կողմից քրեական գործեր և դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցեր քննելիս դատախազի մասնակցությունը պարտադիր է:

***(54-րդ հոդվածը լրաց. 13.06.06 ՀՕ-67-Ն)***

**Հոդված 55. Քննիչը**

1. Քննիչը պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում քրեական գործով իրականացնում է նախաքննություն:

2. Քննիչը լիազորված է հանցագործության դեպքով նախապատրաստել նյութեր և հարուցել քրեական գործ և սույն օրենսգրքով սահմանված ենթակայության կանոններին համապատասխան գործն ընդունել իր վարույթ կամ քննության համար ուղարկել այլ քննիչի, իր վարույթում եղած գործի քննության ընթացքում հարուցել քրեական գործ, եթե հայտնաբերվել է նոր հանցագործության դեպք, որը կատարել է այլ անձ: Քննիչը նաև իրավասու է սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան մերժել քրեական գործ հարուցելը: Քննիչը քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկում է դատախազին՝ որոշման օրինականությունը ստուգելու նպատակով:

3. Քրեական գործն իր վարույթն ընդունելուց հետո քննիչը գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար լիազորված է ինքնուրույն ուղղություն տալ քննությանը, ընդունել անհրաժեշտ որոշումներ, սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան իրականացնել քննչական և այլ դատավարական գործողություններ, բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական դատավարական օրենքով նախատեսվում է դատարանից ստանալ թույլտվություն: Քննիչը պատասխանատվություն է կրում քննչական և այլ դատավարական գործողություններն օրինական ու ժամանակին կատարելու համար:

4. Քննիչը, մասնավորապես, լիազորված է՝

1) մինչև քրեական գործ հարուցելը նախապատրաստվող նյութերով կատարել դեպքի վայրի զննություն, հետազոտման համար վերցնել նմուշներ և նշանակել փորձաքննություն.

2) հարցաքննել կասկածյալին, մեղադրյալին, տուժողին, վկային, նշանակել փորձաքննություն, կատարել զննություններ, խուզարկություններ, առգրավումներ և այլ քննչական գործողություններ.

3) միջոցներ ձեռնարկել վնասը տուժած անձին հատուցելու համար.

4) պահանջել փաստաթղթեր և նյութեր, որոնք կարող են տեղեկություններ պարունակել դեպքի և դրան առնչվող անձանց մասին.

5) պահանջել կատարելու վերստուգումներ, գույքագրումներ, այլ ստուգողական գործողություններ.

6) իր իրավասության սահմաններում նախապատրաստվող նյութերով և քրեական գործով հետաքննության մարմնից տեղեկություններ ստանալ օպերատիվ-հետախուզական գործողությունների իրականացման և հանցագործությունների բացահայտման, անհայտ կորած անձանց և կորած գույքի հայտնաբերման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին.

7) իր կողմից նախապատրաստվող նյութերով և քրեական գործով հետաքննության մարմնին նրա համար պարտադիր գրավոր հանձնարարություններ տալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման մասին.

8) հետաքննության մարմնին հանձնարարել իրագործելու ձերբակալման, բերման ենթարկելու, կալանավորման, այլ դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ որոշումները, ինչպես նաև հետաքննության մարմնից անհապաղ աջակցություն ստանալ քննչական և այլ դատավարական գործողություններ իրականացնելիս.

9) կատարված հանցագործության մասին հետաքննության մարմնից հաղորդում ստանալիս մեկնել դեպքի վայր և ներգրավվել գործի քննությանը՝ քրեական գործ հարուցելու կամ հարուցված գործն իր վարույթ վերցնելու միջոցով.

10) առանձին քննչական գործողությունների կատարումը հանձնարարել հետաքննության մարմնին.

11) կանչել անձանց որպես վկա.

12) գործին մասնակից դարձնել ընթերականեր, թարգմանիչներ, մասնագետներ, փորձագետներ.

13) ձերբակակել հանցագործության համար կասկածվող անձին և որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկել դատախազին.

14) որոշում կայացնել անձին քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, մեղադրանք առաջադրել, այդ մասին 24 ժամվա ընթացքում տեղյակ պահել դատախազին.

15) ճանաչել տուժող, քաղաքացիական հայցվող, քաղաքացիական պատասխանող.

16) ապահովել փաստաբանների նշանակումը քրեական գործով որպես պաշտպաններ և թույլ տալ անձանց քրեական գործով վարույթին մասնակցել որպես ներկայացուցիչներ.

17) պաշտպաններին և ներկայացուցիչներին հեռացնել քրեական գործով վարույթին մասնակցելուց, եթե կհայտնաբերվեն քրեական դատավարությանը նրանց մասնակցությունը բացառող՝ սույն օրենսգրքի 93 հոդվածում նշված հանգամանքները.

18) համապատասխան անձանց ազատել իրավաբանական օգնություն ստանալու համար սահմանված վճարումներից.

19) լուծել ընթերակային, թարգմանչին, մասնագետին, փորձագետին հայտնած բացարկները.

20) լուծել քրեական դատավարությանը մասնակցող անձանց միջնորդությունները, ինչպես նաև այլ անձանց հայտարարությունները և դիմումները.

21) իր իրավասության սահմաններում լուծել քրեական դատավարությանը մասնակցող անձանց բողոքները.

22) որոշում ընդունել խափանման միջոցներ ընտրելու, փոխելու, վերացնելու և դատավարական հարկադրանքի այլ միջոցներ կիրառելու մասին, բացառությամբ կալանքի, իր որոշմամբ ազատել կալանքի տակ պահվող այն մեղադրյալին, որի կալանքի տակ պահելու ժամկետը լրացել է.

23) որոշում ընդունել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին և այդ որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկել դատախազին.

24) դիմել դատարան՝ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանի խուզարկության միջնորդություններով.

25) անհրաժեշտությունը վերանալու դեպքում վերացնել նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա դրված կալանքը, հեռախոսային խոսակցությունները լսելը.

26) բողոքարկել դատախազի յուրաքանչյուր ցուցումը՝ չկասեցնելով դրա կատարումը.

27) որպես մեղադրյալ ներգրավելու, հանցագործությունը որակելու և մեղադրանքի ծավալի, նախաքննությունն ավարտելու կամ գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին դատախազի ցուցումներին համաձայն չլինելու դեպքում դրանք առանց կատարելու բողոքարկել վերադաս դատախազին.

28) ընդունել որոշում քրեական գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու մասին և այդ որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկել դատախազին որոշման օրինականությունը ստուգելու նպատակով.

29) կազմել և դատախազի հաստատմանը ներկայացնել մեղադրական եզրակացություն, իսկ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքն անմեղսունակ վիճակում կատարած կամ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը

կատարելուց հետո անմեղսունակ դարձած անձանց նկատմամբ քրեական գործերով՝ եզրափակիչ որոշում:

5. Քննիչը պարտավոր է կատարել դատախազի օրինական ցուցումները:

5[1]. Քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում քննիչի կողմից իր լիազորությունների սահմաններում քրեական գործով կայացված որոշումը ենթակա է պարտադիր կատարման բոլոր կազմակերպությունների, պաշտոնատար անձանց ու քաղաքացիների կողմից:

6. Քննիչն իրականացնում է նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ լիազորություններ:

***(55-րդ հոդվածը փոփ., լրաց. 25.05.06 ՀՕ-91-Ն, լրաց. 21.02.07 ՀՕ-93-Ն)***

**Հոդված 56. Հետաքննության մարմինները**

Հետաքննության մարմիններն են՝

1) ոստիկանությունը.

2) զորամասերի, զորամիավորումների հրամանատարները և զինվորական հիմնարկների պետերը՝ զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաև այն արարքների վերաբերյալ գործերով, որոնք կատարվել են զորամասի տարածքում կամ վերագրվում են ժամկետային ծառայության զինծառայողներին.

2[1]) ռազմական ոստիկանությունը՝ օրենքով նրա իրավասությանը հանձնված գործերով.

3) Հայաստանի փրկարար ծառայության մարմինները՝ փրկարարական ծառայության հետ կապված գործերով.

3[1]) Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչությունը՝ հրդեհներին և տեխնիկական անվտանգությանը վերաբերող գործերով.

4) հարկային մարմինները՝ հարկային հանցագործությունների գործերով.

5) մաքսային մարմինները՝ մաքսանենգության և, օրենքով նախատեսված դեպքերում, մտավոր սեփականության իրավունքի խախտման գործերով.

6) ազգային անվտանգության մարմինները՝ օրենքով նրանց իրավասությանը հանձնված գործերով.

7) քրեակատարողական հիմնարկները՝ այդ հիմնարկների տարածքում կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերով.

8) օդանավի հրամանատարը՝ օդանավում թռիչքի ժամանակ տեղի ունեցած հանցագործությունների վերաբերյալ:

***(56-րդ հոդվածը լրաց. 07.03.00 ՀՕ-39, 25.05.06 ՀՕ-91-Ն, 21.12.06 ՀՕ-15-Ն, 22.02.07 ՀՕ-86-Ն, խմբ. 09.04.07 ՀՕ-144-Ն, լրաց. 08.12.11 ՀՕ-307-Ն)***

**Հոդված 57. Հետաքննության մարմնի լիազորությունները**

1. Հետաքննության մարմնի պետն ապահովում է հետաքննության մարմնի լիազորությունների կատարումն անձամբ և հետաքննության մարմնի աշխատակիցների միջոցով:

2. Հետաքննության մարմինը՝

1) հանցագործությունները և դրանք կատարող անձանց բացահայտելու, հանցագործությունը կանխելու և խափանելու նպատակով ձեռնարկում է համապատասխան օպերատիվ-հետախուզական և քրեադատավարական միջոցառումներ.

2) մինչև քրեական գործ հարուցելը նախապատրաստվող նյութերով կատարում է դեպքի վայրի զննություն, հետազոտման համար վերցնում է նմուշներ և նշանակում փորձաքննություն.

3) հարուցում է քրեական գործ, գործն ընդունում է իր վարույթ կամ ուղարկում է ըստ ենթակայության, ինչպես նաև սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան մերժում է քրեական գործ հարուցելը, քրեական գործ հարուցելու կամ գործի հարուցումը մերժելու մասին որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկում է դատախազին՝ որոշման օրինականությունը ստուգելու նպատակով.

4) հայտնաբերված հանցագործության և գործով սկսված հետաքննության մասին անհապաղ տեղյակ է պահում դատախազին և քննիչին.

5) քրեական գործ հարուցելուց հետո հանցագործություն կատարած անձին հայտնաբերելու, հանցագործության հետքերը հայտնաբերելու և ամրապնդելու ուղղությամբ կատարում է քննչական անհետաձգելի գործողություններ՝ զննություն, խուզարկություն, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում, հեռախոսային խոսակցությունների լսում, առգրավում, քննում, կասկածյալի ձերբակալում ու հարցաքննություն, տուժողների և վկաների հարցաքննություն, առերեսում, նշանակում է փորձաքննություն.

6) քրեական գործ հարուցելու պահից տասն օրվա ընթացքում, իսկ հանցանք կատարողին ի հայտ բերելու կամ քննչական անհետաձգելի գործողությունները ավարտելու, ինչպես նաև քննիչի ներգրավման պահից անհապաղ գործը հանձնում է քննիչին.

7) քննիչի վարույթում գտնվող հանցագործությունների գործերով կատարում է քննիչի, դատախազի հանձնարարությունները, դատախազի ցուցումները.

8) գրանցում է հանցագործությունների մասին հաղորդումները.

9) բերման է ենթարկում հանցանքի կատարման մեջ կասկածվող անձանց, զննում և խուզարկում է նրանց, ինչպես նաև ազատում է առանց բավարար հիմքերի բերման ենթարկված անձանց.

10) հնարավորություն է ապահովում դատախազին՝ իր լիազորությունների շրջանակում ստուգելու հետաքննության մարմնի գործունեությունը.

11) դատախազին և քննիչին տրամադրում է իրենց լիազորությունների շրջանակում նրանց պահանջած անհրաժեշտ տեղեկությունները.

12) միջոցներ է ձեռնարկում հանցագործությամբ պատճառված վնասի հատուցումն ապահովելու ուղղությամբ.

13) հարցման է ենթարկում դեպքի ականատեսներին, ծանոթանում դեպքի իրադրությանը, ինչպես նաև այն փաստաթղթերին, գործերին և նյութերին, որոնք կարող են տեղեկություններ պարունակել դեպքի և դրան առնչվող անձանց մասին.

14) պահանջում է փաստաթղթեր, որոնք կարող են տեղեկություններ պարունակել դեպքի և դրան առնչվող անձանց մասին.

15) պահանջում է կատարել վերստուգումներ, գույքագրումներ, այլ ստուգողական գործողություններ.

16) ***(կեպն ուժը կորցրել է 25.05.06 ՀՕ-91-Ն)***

17) կազմակերպում է դատարանի օրինական հանձնարարությունների կատարումը.

18) իրականացնում է սույն օրենսգրքով իր իրավասությանը վերապահված այլ գործողություններ:

3. Քրեական գործ հարուցելու, քրեական գործի հարուցումը մերժելու, կասկածյալին ձերբակալելու կամ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու, այն վերացնելու կամ փոփոխելու, համապատասխան քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու համար դատարանին միջնորդությամբ դիմելու, գործը քննիչին հանձնելու մասին հետաքննություն կատարող անձի կողմից կայացված որոշումները հաստատվում են հետաքննության մարմնի պետի կողմից:

4. Հետաքննության մարմնի պետն իրավունք ունի հետաքննության մարմնի աշխատակցին հանձնարարել հանցագործության դեպքով կատարել հետաքննություն, նրան տալ պարտադիր գրավոր ցուցումներ առանձին քննչական գործողություններ կատարելու մասին, գործը մի աշխատակցից հանձնել մյուսին, գործի քննությունը հանձնարարել մի քանի աշխատակիցների, մասնակցել հետաքննության կատարմանը և անձամբ կատարել հետաքննություն:

5. Դատախազի ցուցումները, որոնք տրված են սույն օրենսգրքով սահմանված կանոններին համապատասխան, պարտադիր են հետաքննության մարմնի պետի համար:

6. Հետաքննության մարմինն իրականացնում է նաև սույն օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

***(57-րդ հոդվածը փոփ., խմբ. 25.05.06 ՀՕ-91-Ն, լրաց. 21.02.07 ՀՕ-93-Ն)***

**Հոդված 62. Կասկածյալը**

1. Կասկածյալ է այն անձը՝

1) որը ձերբակալվել է հանցանք կատարելու մեջ կասկածվելու պատճառով.

2) որի նկատմամբ մինչև մեղադրանք առաջադրելը խափանման միջոց ընտրելու մասին որոշում է կայացված:

2. Քրեական հետապնդման մարմինն իրավունք չունի կասկածյալի վիճակում ձերբակալվածին պահել 72 ժամից ավելի, իսկ անազատության մեջ պահելու հետ չկապված խափանման միջոց կիրառելիս ոչ ավելի, քան 7 օր խափանման միջոց ընտրելու մասին որոշումը նրան հայտարարելու պահից:

3. Սույն հոդվածի երկրորդ մասում սահմանված ժամկետները լրանալիս քրեական հետապնդման մարմինը պարտավոր է կասկածյալին ազատել արգելանքից, կամ վերացնել նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցը, կամ որոշում ընդունել նրան որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

4. Կասկածը համարելով չհիմնավորված՝ քրեական հետապնդման մարմինը և դատարանը պարտավոր են կասկածյալին ազատել արգելանքից կամ վերացնել նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ նախքան սույն հոդվածի երկրորդ մասում սահմանված ժամկետների լրանալը:

5. Անձը դադարում է կասկածյալ լինելուց նրան արգելանքից ազատելու, նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցը վերացնելու կամ նրան որպես մեղադրյալ ներգրավելու մասին քրեական հետապնդման մարմնի կողմից որոշում ընդունելու պահից:

***(62-րդ հոդվածը փոփ. 04.12.01 ՀՕ-263, 25.05.06 ՀՕ-91-Ն)***

**Հոդված 64. Մեղադրյալը**

1. Մեղադրյալ է այն անձը, որի նկատմամբ որոշում է կայացված որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

2. Մեղադրյալը, որի վերաբերյալ գործը նշանակված է դատական քննության, կոչվում է ամբաստանյալ:

3. Մեղադրյալը, որի վերաբերյալ կա օրինական ուժի մեջ մտած դատարանի դատավճիռ, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն մեղադրական է, կոչվում է դատապարտյալ, իսկ եթե դատավճիռն ամբողջությամբ արդարացման է՝ արդարացված:

***(64-րդ հոդվածը խմբ., լրաց. 25.05.06 ՀՕ-91-Ն)***

**Հոդված 104. Ապացույցների հասկացությունը**

1. Քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

2. Քրեական դատավարությունում որպես ապացույցներ թույլատրվում են՝

1) կասկածյալի ցուցմունքները.

2) մեղադրյալի ցուցմունքները.

3) տուժողի ցուցմունքները.

4) վկայի ցուցմունքները.

4[1]) տվյալ գործի մեղադրանքի հետ առնչվող՝ մեկ այլ քրեական գործով կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի ցուցմունքները.

5) դատապարտյալի ցուցմունքները.

6) փորձագետի եզրակացությունը.

7) իրեղեն ապացույցները.

8) քննչական և դատական գործողությունների արձանագրությունները.

9) այլ փաստաթղթերը:

3. Քրեական դատավարության ընթացքում թույլատրվում է օգտագործել միայն այն փաստական տվյալները, որոնք ձեռք են բերվել սույն օրենսգրքով սահմանված պահանջների պահպանմամբ:

***(104-րդ հոդվածը լրաց. 25.05.06 ՀՕ-91-Ն)***

**Հոդված 105. Որպես ապացույց չթույլատրվող նյութերը**

1. Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝

1) բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ, անձին ծաղրի ենթարկելով, ինչպես նաև այլ անօրինական գործողություններով.

2) կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի, դատավարության լեզվին չտիրապետող անձանց իրավունքների՝ սույն օրենսգրքով նախատեսված լրացուցիչ երաշխիքների էական խախտմամբ.

2[1]) վկայի՝ սույն օրենսգրքի 86-րդ հոդվածի հինգերորդ մասով նախատեսված իրավունքների խախտմամբ.

3) տվյալ քրեական գործով քրեական դատավարություն իրականացնելու, համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելու իրավունք չունեցող անձի կողմից.

4) բացարկման ենթակա անձի մասնակցությամբ, եթե նա իմացել է կամ պետք է իմանար քրեական գործով վարույթին իր մասնակցությունը բացառող հանգամանքների առկայության մասին.

5) քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ.

6) այն անձից, որն ունակ չէ ճանաչել փաստաթուղթը կամ այլ առարկան, հաստատել դրա իսկությունը, հայտնել դրա առաջացման և ստացման հանգամանքների մասին.

7) անհայտ կամ դատական նիստում չբացահայտվող աղբյուրից.

8) ժամանակակից գիտական պատկերացումներին հակասող մեթոդների կիրառման արդյունքում:

2. Ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ սույն օրենսգրքի որևէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին՝ օրենքով երաշխավորված իրավունքների զրկմամբ կամ սահմանափակմամբ կամ որևէ այլ կերպ ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա:

3. Մեղադրանքի կողմի թույլ տված քրեադատավարական օրենքի պահանջների խախտման հետևանքով ապացուցողական նշանակությունը կորցնելու ենթակա նյութը պաշտպանության կողմի միջնորդությամբ կարող է թույլատրվել որպես ապացույց: Այդպիսի ապացույցը թույլատրվում է միայն համապատասխան կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ:

***(105-րդ հոդվածը լրաց. 23.05.06 ՀՕ-104-Ն)***

**Հոդված 106. Ապացույցի օգտագործման անթույլատրելիության հաստատումը**

1. Փաստական տվյալների՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիությունը, ինչպես նաև վարույթում դրանց սահմանափակ օգտագործման հնարավորությունը հաստատում է վարույթն իրականացնող մարմինը՝ սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ:

2. Ապացույցի թույլատրելիությունը հիմնավորելու պարտականությունն ընկած է այն ձեռք բերող կողմի վրա: Եթե ապացույցը ձեռք բերելիս պահպանվել են սույն օրենսգրքի բոլոր պահանջները, ապացույցի անթույլատրելիությունը հիմնավորելու պարտականությունը կրում է դրա թույլատրելիությունը վիճարկող կողմը:

**Հոդված 107. Ապացուցման ենթակա հանգամանքները**

Միայն ապացույցների հիման վրա են հաստատվում՝

1) դեպքը և հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն).

2) կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին.

3) հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները.

4) անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ.

5) քրեական օրենքով նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ խստացնող հանգամանքները.

6) այն հանգամանքները, որոնցով դատավարության մասնակիցը կամ քրեական դատավարությանը մասնակցող այլ անձը հիմնավորում է իր պահանջները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով.

7) այն հանգամանքները, որոնք հիմնավորում են, որ գույքը ստացվել է հանցագործության կատարման արդյունքում կամ այդ գույքի օգտագործումից կամ օգտագործվել է կամ նախատեսվել է օգտագործել որպես հանցագործության գործիք կամ միջոց կամ ուղղվել է ահաբեկչության ֆինանսավորմանը կամ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով նախատեսված մաքսանենգության առարկա:

***(107-րդ հոդվածը փոփ. 25.05.06 ՀՕ-91-Ն, լրաց. 21.06.14 ՀՕ-115-Ն)***

## Հոդված 108. Որոշակի ապացույցների առկայությամբ հաստատվող հանգամանքները

Քրեական գործով վարույթում ստորև նշված հանգամանքները կարող են հաստատվել միայն հետևյալ ապացույցները նախապես ստանալով և հետազոտելով՝

1) մահվան պատճառը և առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը՝ դատաբժշկական փորձագետի եզրակացությունը.

2) հոգեկան հիվանդության, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարման, այլ հիվանդագին վիճակի կամ տկարամտության հետևանքով մեղադրյալի ունակ չլինելը դեպքի պահին գիտակցելու իր գործողությունների (անգործության) բնույթը և նշանակությունը, դրանց վնասակարությունը կամ ղեկավարելու դրանք՝ դատահոգեբուժական կամ դատահոգեբանական փորձագետի եզրակացությունը.

3) վկայի կամ տուժողի ունակ չլինելը ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները՝ դատահոգեբուժական փորձագետի եզրակացությունը.

4) գործի համար նշանակություն ունենալու դեպքում՝ տուժողի, կասկածյալի, մեղադրյալի որոշակի տարիքի հասնելը՝ տարիքի մասին փաստաթուղթը, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատաբժշկական և դատահոգեբանական բնագավառների փորձագետների եզրակացությունները.

5) կասկածյալի և մեղադրյալի մոտ նախկին դատվածության առկայությունը և նրան որոշակի պատիժ նշանակելը՝ համապատասխան տեղեկանքը, իսկ հնարավորության դեպքում՝ նաև դատարանի դատավճռի պատճենը:

***(108-րդ հոդվածը փոփ. 25.05.06 ՀՕ-91-Ն)***

**Հոդված 109. Կասկածյալի ցուցմունքները**

1. Կասկածյալի ցուցմունքները՝ մինչդատական վարույթում սույն օրենսգրքով սահմանված կարգով կատարված հարցաքննության ժամանակ գրավոր կամ բանավոր ձևով նրա հաղորդած տվյալներն են:

2. Կասկածյալն իրավունք ունի ցուցմունքներ տալ կասկածանքի առիթով, ինչպես նաև ապացույցների, գործի համար նշանակություն ունեցող իրեն հայտնի այլ հանգամանքների մասին:

**Հոդված 110. Մեղադրյալի ցուցմունքները**

1. Մեղադրյալի ցուցմունքները՝ մինչդատական վարույթում, ինչպես նաև դատարանում սույն օրենսգրքով սահմանված կարգով կատարված հարցաքննության ժամանակ գրավոր կամ բանավոր ձևով նրա հաղորդած տվյալներն են:

2. Մեղադրյալն իրավունք ունի ցուցմունքներ տալ իրեն առաջադրված մեղադրանքի առիթով, ինչպես նաև ապացույցների, գործի համար նշանակություն ունեցող իրեն հայտնի այլ հանգամանքների մասին:

**Հոդված 111. Տուժողի ցուցմունքները**

1. Տուժողի ցուցմունքները՝ մինչդատական վարույթում, ինչպես նաև դատարանում սույն օրենսգրքով սահմանված կարգով կատարված հարցաքննության ժամանակ գրավոր կամ բանավոր ձևով նրա հաղորդած տվյալներն են:

2. Տուժողը կարող է հարցաքննվել գործով ապացուցման ենթակա ցանկացած հանգամանքի, ինչպես նաև կասկածյալի, մեղադրյալի հետ իր հարաբերությունների մասին: Տուժողի հաղորդած տվյալները չեն կարող ծառայել որպես ապացույց, եթե նա չի նշում դրանց ստացման աղբյուրը:

**Հոդված 112. ՎԿԱՅԻ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԸ**

1. Վկայի ցուցմունքները՝ մինչդատական վարույթում, ինչպես նաև դատարանում սույն օրենսգրքով սահմանված կարգով կատարված հարցաքննության ժամանակ գրավոր կամ բանավոր ձևով նրա հաղորդած տվյալներն են:

2. Վկան կարող է հարցաքննվել գործին վերաբերող ցանկացած հանգամանքի, այդ թվում՝ մեղադրյալի, տուժողի, այլ վկաների հետ իր հարաբերությունների մասին: Վկայի հաղորդած տվյալները չեն կարող ծառայել որպես ապացույց, եթե նա չի նշում դրանց ստացման աղբյուրը:

**Հոդված 113. Դատապարտյալի ցուցմունքները**

1. Դատապարտյալի ցուցմունքները՝ մինչդատական վարույթում, ինչպես նաև դատարանում սույն օրենսգրքով սահմանված կարգով կատարված հարցաքննության ժամանակ գրավոր կամ բանավոր ձևով նրա հաղորդած տվյալներն են:

2. Դատապարտյալն իրավունք ունի ցուցմունքներ տալ գործի այն հանգամանքների մասին, որոնք ապացուցված են իր նկատմամբ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

**Հոդված 113[1] . Մեկ այլ քրեական գործով կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի ցուցմունքները**

1. Տվյալ գործի մեղադրանքի հետ առնչվող՝ մեկ այլ քրեական գործով կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի ցուցմունքները մինչդատական վարույթում և դատարանում սույն օրենսգրքով սահմանված կարգով նրա հաղորդած գրավոր կամ բանավոր տվյալներն են կատարված հանցագործության մասին:

2. Մեկ այլ քրեական գործով կասկածյալը կամ մեղադրյալը կամ ամբաստանյալը կարող է հարցաքննվել ինչպես այդ գործով, այնպես էլ այն գործով իր մեղադրանքի շրջանակներում ցանկացած հանգամանքի շուրջ, որի առնչությամբ ինքը ներգրավվել է հարցաքննվելու համար:

3. Մեկ այլ քրեական գործով կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հարցաքննությունը կատարվում է կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հարցաքննության համար սույն օրենսգրքով սահմանված կարգով:

***(113[1] -րդ հոդվածը լրաց. 25.05.06 ՀՕ-91-Ն)***

## Հոդված 114. ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

1. Փորձագետի եզրակացությունը գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի որևէ բնագավառում հատուկ գիտելիքների օգտագործմամբ գրավոր հիմնավորված հետևություններն են իրեն առաջադրած հարցերի, ինչպես նաև իր իրավասության մեջ մտնող այն հանգամանքների վերաբերյալ, որոնց նա հանգել է՝ գործի համապատասխան նյութերը հետազոտելով:

2. Փորձագետը կարող է հարցաքննվել իր տված եզրակացության պարզաբանման կապակցությամբ:

3. Փորձագետի հարցաքննության արձանագրությունը չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը:

## Հոդված 115. Իրեղեն ապացույցները

1. Իրեղեն ապացույցներ են այն առարկաները, որոնք հանցագործության գործիք են ծառայել կամ իրենց վրա հանցագործության հետքեր են պահպանել, կամ հանցավոր գործողությունների օբյեկտներ են եղել, ինչպես նաև հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը, այլ արժեքները և մյուս բոլոր առարկաները, որոնք կարող են հանցագործությունը հայտնաբերելու, գործի փաստական

հանգամանքները պարզելու, մեղավորներին ի հայտ բերելու, մեղադրանքը հերքելու կամ պատասխանատվությունը մեղմացնելու միջոցներ ծառայել:

2. Առարկան իրեղեն ապացույց է ճանաչվում քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ:

3. Դատարանն առարկային իրեղեն ապացույցի նշանակություն է տալիս միայն այն դեպքում, եթե դրա մանրամասն նկարագրությամբ, կնքելով և այն ձեռք բերելուց անմիջապես հետո կատարված այլ մանրամասն գործողություններով բացառվել է առարկան փոխելու, առանձնահատկությունները, հատկանիշները, պարունակող հետքերն էապես փոփոխելու հնարավորությունը, կամ եթե դատարանում հետազոտվելուց անմիջապես առաջ այն ճանաչել են կասկածյալը, մեղադրյալը, տուժողը կամ վկան:

## Հոդված 116. ԻՐԵՂԵՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ և ԱՅԼ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

1. Իրեղեն ապացույցները պահվում են քրեական գործի հետ, իսկ մեծածավալության դեպքում՝ կարող են հանձնվել հիմնարկների, ձեռնարկությունների, կազմակերպությունների և առանձին անձանց պատասխանատու պահպանմանը:

2. Քննչական գործողություններ կատարելիս առգրավված թանկարժեք մետաղները և քարերը, օտարերկրյա արժույթները, դրամը, չեկերը և արժեթղթերը, որոնք համապատասխան քրեական գործով վարույթում կարող են ճանաչվել իրեղեն ապացույց, զննվելուց անմիջապես հետո, իրենց անհատական հատկանիշներով գործի համար նշանակություն չունենալու դեպքում, պետք է պահպանության համար հանձնվեն պետական բանկի հիմնարկներին:

3. Իրեղեն ապացույցները և առգրավված այլ առարկաները, բացառությամբ շուտ փչացող առարկաների, քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից պահվում են այնքան, քանի դեռ նրանց տնօրինման հարցը չի լուծվել դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ: Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում իրեղեն

ապացույցների տնօրինման մասին որոշումը կարող է ընդունվել նախքան քրեական գործով վարույթի ավարտը:

4. Եթե գործին որպես իրեղեն ապացույց կցված առարկայի նկատմամբ իրավունքի մասին վեճը ենթակա է քննության քաղաքացիական դատավարության կարգով, տվյալ առարկան պահվում է մինչև քաղաքացիական գործով վճիռն ուժի մեջ մտնելը:

## Հոդված 118. Նախքան քրեական գործով վարույթի ավարտն իրեղեն ապացույցների մասին ընդունվող որոշումները

1. Նախքան քրեական գործով վարույթի ավարտը քրեական վարույթն իրականացնող մարմինը սեփականատիրոջը կամ օրինական տիրապետողին հետ է վերադարձնում՝

1) շուտ փչացող առարկաները.

2) առօրյա կենցաղում օգտագործելու համար անհրաժեշտ այն առարկաները, որոնց վրա օրենքով բռնագանձում չի կարող տարածվել.

3) թռչունները և տնային կենդանիները, ավտոմեքենան կամ տրանսպորտային այլ միջոցը, եթե դրանց վրա քաղաքացիական հայցը, դատական ծախսերը կամ հնարավոր գույքային բռնագանձումն ապահովելու համար կալանք դրված չէ:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված առարկաների սեփականատերը կամ օրինական տիրապետողը հայտնի չլինելու կամ վերոհիշյալ իրեղեն ապացույցները վերադարձնելն այլ պատճառներով անհնարին լինելու դեպքում դրանք հանձնվում են համապատասխան կազմակերպություններին՝ պահելու, խնամելու կամ իրացնելու համար:

## Հոդված 119. ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ՎԱՐՈՒՅԹՆ ԱՎԱՐՏԵԼԻՍ ԻՐԵՂԵՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՈՒՆՎՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. Դատարանի դատավճռում, ինչպես նաև քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման մեջ իրեղեն ապացույցների հարցի լուծումը կատարվում է հետևյալ կանոնների պահպանմամբ՝

1) հանցագործության գործիքները, ինչպես նաև շրջանառությունից հանված առարկաները բռնագրավվում և հանձնվում են համապատասխան պետական հիմնարկներին, իսկ արժեք չներկայացնելու դեպքում՝ ոչնչացվում են.

2) արժեք չներկայացնող իրերը ոչնչացվում են օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ շահագրգռված անձանց միջնորդության դեպքում՝ կարող են հանձնվել նրանց.

3) դրամը, այլ արժեքները և մյուս առարկաները, որոնք օրինական տիրապետումից դուրս են եկել հանցագործության կամ օրենքով չթույլատրված այլ գործողությունների հետևանքով, հանձնվում են տիրապետողին, սեփականատիրոջը կամ նրանց իրավահաջորդներին.

4) հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը, այլ արժեքները և մյուս առարկաները դատարանի դատավճռով ուղղվում են դատական ծախսերի հատուցմանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը, իսկ եթե հայտնի չէ վնաս կրած անձը, որպես եկամուտ՝ հանձնվում են պետությանը.

5) իրեղեն ապացույց հանդիսացող փաստաթղթերը պահվում են գործի հետ միասին՝ վերջինիս պահելու ամբողջ ժամանակամիջոցում, կամ հանձնվում են շահագրգիռ կազմակերպություններին և քաղաքացիներին:

***(119-րդ հոդվածը փոփ. 25.05.06 ՀՕ-91-Ն)***

## Հոդված 121. Քննչական և դատական գործողությունների արձանագրությունները

1. Քննչական և դատական գործողությունների արձանագրությունները սույն օրենսգրքով նախատեսված գրավոր կազմված փաստաթղթեր են, որոնք հաստատում են քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից անմիջականորեն ընկալված, քրեական գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները:

2. Որպես ապացույց կարող են օգտագործվել սույն օրենսգրքի պահանջների պահպանմամբ կատարված հետևյալ քննչական և դատական գործողությունների արձանագրությունները.

1) զննության.

2) քննման.

3) ճանաչման ներկայացնելու.

4) արտաշիրիմման.

5) առգրավման.

6) խուզարկության.

7) գույքի վրա կալանք դնելու.

8) նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելու.

9) հեռախոսային խոսակցությունները լսելու.

10) նմուշներ ստանալու.

11) քննչական փորձարարության:

3. Որպես ապացույց կարող են օգտագործվել նաև կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների վերաբերյալ ընդունված բանավոր հայտարարությունների, մեղայականով ներկայանալու, ձերբակալման, անձանց իրավունքների և պարտականությունների պարզաբանման առիթով կազմված արձանագրությունները:

4. Քննչական գործողության արձանագրության ոչ լրիվությունը չի կարող մեղադրանքի նպատակներով լրացվել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, ինչպես նաև ընթերակայի և այլ անձանց ցուցմունքներով:

**Հոդված 122. Այլ փաստաթղթեր**

1. Փաստաթուղթ է թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառում, որով կարող են հաստատվել քրեական գործի համար նշանակություն ունեցող տվյալները:

2. Սույն օրենսգրքի 115 հոդվածի առաջին մասում նշված հատկանիշներ պարունակող փաստաթղթերը կարող են ծառայել նաև որպես իրեղեն ապացույցներ:

3. Այլ փաստաթղթերն ապացույց են ճանաչվում վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ:

**Հոդված 123. Փաստաթղթերը կցելը, պահպանելը և վերադարձնելը**

1. Փաստաթուղթը քրեական գործի նյութերին կցվում է վարույթն իրականացնող մարմնի կողմից և պահվում է գործի հետ՝ վերջինիս պահելու ամբողջ ժամանակամիջոցում:

2. Այն դեպքում, երբ առգրավված և գործին կցված փաստաթղթերն օրինական տիրապետողին անհրաժեշտ են ընթացիկ հաշվառման, հաշվետվության և այլ օրինաչափ նպատակների համար, նրան հնարավորություն է ընձեռվում ժամանակավոր օգտագործման համար ստանալ այդ փաստաթղթերը կամ դրանցից պատճեններ հանել:

3. Դատարանի դատավճիռը կամ քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամիս հետո գործում առկա փաստաթղթի բնօրինակները՝ դրանց օրինական տիրապետողների խնդրանքով, վերադարձվում են նրանց: Այս դեպքում գործում պետք է մնա փաստաթղթի պատճենը, որի ճշտությունը հաստատում է քննիչը, դատախազը կամ դատարանը:

**Հոդված 124. Ապացուցումը**

1. Ապացուցումը՝ գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է:

2. Մեղադրյալի մեղքի և պատասխանատվությունը խստացնող հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունը կրում են քրեական հետապնդման մարմինները:

**Հոդված 125. Ապացույցներ հավաքելը**

Ապացույցները հավաքվում են հետաքննության, նախաքննության և դատական քննության ընթացքում՝ սույն օրենսգրքով նախատեսված քննչական և դատական գործողությունների կատարման ճանապարհով:

**Հոդված 126. ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ**

Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն ստուգելու միջոցով:

**Հոդված 127. Ապացույցների գնահատումը**

1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ:

**Հոդված 172. Ծառայողական և առևտրային գաղտնիքի ստացումը և պահպանումը**

***(վերնագիրը լրաց. 14.12.04 ՀՕ-28-Ն)***

(...)

3.2. Քրեական հետապնդում իրականացնող մարմինները քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկությունները, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող

տեղեկությունները կարող են ստանալ խուզարկության կամ առգրավման վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա:

(…)

**Հոդված 175. Քրեական գործ հարուցելու պարտականությունը**

Քրեական գործ հարուցելու՝ սույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել:

**Հոդված 176. Քրեական գործ հարուցելու առիթները**

Քրեական գործ հարուցելու առիթներն են՝

1) հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին.

2) հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները.

3) հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս:

**Հոդված 177. Ֆիզիկական անձանց հաղորդումները**

1. Հանցագործությունների մասին ֆիզիկական անձանց հաղորդումները կարող են լինել գրավոր կամ բանավոր:

2. Քննչական գործողություն կատարելիս կամ դատական քննության ընթացքում հանցագործության մասին արված բանավոր հաղորդումը մտցվում է համապատասխանաբար՝ քննչական գործողության կամ դատական նիստի արձանագրության մեջ: Այլ դեպքերում կազմվում է առանձին արձանագրություն: Արձանագրության մեջ պետք է նշվեն դիմողի ազգանունը, անունը, ծննդյան թիվը, բնակարանի և ծառայողական հասցեն, նրա առնչությունը հանցագործությանը և իրազեկության աղբյուրը, ինչպես նաև տեղեկություններ նրա կողմից ներկայացված

անձը հաստատող փաստաթղթերի մասին: Եթե դիմողը չի ներկայացրել անձը հաստատող փաստաթղթեր, պետք է ձեռնարկվեն այլ միջոցառումներ՝ նրա անձի մասին տեղեկություններն ստուգելու համար:

3. Եթե լրացել է դիմողի 16 տարին, նա նախազգուշացվում է սուտ մատնության համար պատասխանատվության մասին, ինչը հաստատում է իր ստորագրությամբ:

4. Հաղորդումն արձանագրության մեջ շարադրվում է առաջին դեմքով:

5. Արձանագրությունն ստորագրում են դիմողը և հաղորդումն ընդունող պաշտոնատար անձը:

6. Սույն հոդվածի առաջին, երկրորդ, չորրորդ և հինգերորդ մասերում շարադրված կանոնները տարածվում են նաև դիմողի կատարած հանցանքի մասին հաղորդման վրա՝ մեղայականով ներկայանալու դեպքում:

7. Չստորագրված կամ կեղծ ստորագրությամբ կամ մտացածին անձի անունից գրված նամակը, հայտարարությունը կամ հանցագործության մասին այլ անանուն հաղորդումը քրեական գործ հարուցելու առիթ չէ:

***(177-րդ հոդվածը փոփ. 25.05.06 ՀՕ-91-Ն)***

**Հոդված 178. Իրավաբանական անձանց հաղորդումները**

Իրավաբանական անձի հաղորդումը պետք է ունենա ծառայողական նամակի կամ վավերացված հեռագրի, հեռախոսագրի, ռադիոգրի, էլեկտրոնային փոստի կամ հաղորդումների այլ ընդունված ձև: Հաղորդմանը կարող են կցվել հանցանքի կատարումը հաստատող փաստաթղթեր:

**Հոդված 179. Լրատվության միջոցների հաղորդումները**

1. Լրատվության միջոցների հաղորդումներ են հանդիսանում կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների մասին հաղորդումները մամուլում, ռադիոյով, հեռուստատեսությամբ, ինչպես նաև լրատվության միջոցներին հասցեագրված և չհրապարակված հաղորդակցություններում:

2. Հանցագործությունների մասին հաղորդումներ հրապարակած կամ ըստ պատկանելության ուղարկած լրատվության միջոցները, ինչպես նաև այդ

հաղորդումների հեղինակները պարտավոր են հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի պահանջով ներկայացնել հանցագործության մասին հաղորդումը հաստատող՝ իրենց մոտ եղած նյութերը:

**Հոդված 180. Հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման կարգը**

1. Հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում:

2. Նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն:

***(180-րդ հոդվածը փոփ. 25.05.06 ՀՕ-91-Ն)***

**Հոդված 181. Հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման արդյունքում ընդունվող որոշումները**

Հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) քրեական գործ հարուցելու մասին.

2) քրեական գործ հարուցելը մերժելու մասին.

3) հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին:

**Հոդված 182. Քրեական գործ հարուցելու կարգը**

1. Քրեական գործ հարուցելու առիթի և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելու մասին:

2. Որոշման մեջ պետք է նշվեն գործ հարուցելու առիթն ու հիմքը, քրեական օրենքի այն հոդվածը, որի հատկանիշներով հարուցվում է գործը, հարուցելուց հետո գործի հետագա ընթացքը:

3. Եթե այդ պահին հայտնի է հանցագործությունից տուժած անձը, քրեական գործ հարուցելու հետ միաժամանակ այդ անձը ճանաչվում է տուժող, իսկ եթե հանցագործության մասին հաղորդման հետ միաժամանակ ներկայացված է քաղաքացիական հայց, այդ անձը նույն որոշմամբ ճանաչվում է նաև քաղաքացիական հայցվոր:

4. Քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենն ուղարկվում է հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձին:

5. Քրեական գործ հարուցելու հետ միաժամանակ պետք է միջոցառումներ ձեռնարկվեն հանցագործությունը խափանելու և կանխելու, ինչպես նաև հանցագործության հետքերը, այն առարկաները և փաստաթղթերը պահելու և պահպանելու ուղղությամբ, որոնք գործի համար կարող են նշանակություն ունենալ:

**Հոդված 183. Տուժողի բողոքի հիման վրա հարուցվող քրեական գործերը**

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասով, 114-րդ հոդվածի 1-ին մասով, 115-րդ հոդվածի 1-ին մասով, 116-րդ հոդվածի 1-ին մասով, 117-րդ հոդվածով, 118-րդ հոդվածով, 119-րդ հոդվածի 1-ին մասով, 120-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 121-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 124-րդ հոդվածի 1-ին մասով, 128-րդ հոդվածի 1-ին մասով, 137-րդ հոդվածի 1-ին մասով, 158-րդ հոդվածի 1-ին մասով, 174-րդ հոդվածով, 177-րդ հոդվածի 1-ին մասով, 178-րդ հոդվածի 1-ին մասով, 179-րդ հոդվածի 1-ին մասով, 181-րդ հոդվածի 1-ին մասով, 183-րդ հոդվածի 1-ին մասով, 184-րդ հոդվածի 1-ին մասով, 185-րդ հոդվածի 1-ին մասով, 186-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 197-րդ հոդվածով, 213-րդ հոդվածի 1-ին մասով, 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա, և կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման: Հաշտությունը թույլատրվում է մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի՝ խորհրդակցական սենյակ հեռանալը:

2. ***(մասն ուժը կորցրել է 21.02.07 ՀՕ-93-Ն)***

3. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված կարգից շեղումներ կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

***(183-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն, խմբ., փոփ. 21.02.07 ՀՕ-93-Ն, փոփ. 18.05.10 ՀՕ-99-Ն, 23.05.11 ՀՕ-145-Ն)***

**Հոդված 184. Քրեական գործի նյութերով նոր գործի հարուցումը**

1. Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը իրենց վարույթում գտնվող քրեական գործի նյութերով կայացնում են որոշում նոր գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելու մասին, իսկ դատարանը նման որոշում կայացնելու միջնորդությամբ դիմում է դատախազին, եթե մեղադրյալին վերագրվող հանցագործություններից բացի բացահայտված է առաջինի հետ չկապված այլ հանցագործություն, որը կատարել է այլ անձ՝ առանց մեղադրյալի մասնակցության:

2. Որոշման մեջ պետք է նշվեն՝ գործի հարուցման և անջատման հիմքերը, դրվագները և անձինք, քրեական օրենքի այն հոդվածը, հոդվածի մասը կամ կետը, որի հատկանիշներով գործ է հարուցված և անջատված է առանձին վարույթում, անջատված գործը նախաքննության ուղարկելու կամ գործն իր վարույթն ընդունելու մասին որոշումը:

3. Որոշման մեջ ընդգրկվում կամ պատճեններով կամ բնօրինակներով նրան կցվում է անջատվող նյութերի՝ որոշումների, արձանագրությունների, փաստաթղթերի, իրեղեն ապացույցների ցանկը:

4. Որոշման և անջատվող նյութերի՝ նրան կցվող ցանկի առաջին օրինակն ընդգրկվում է սկզբնական գործի, իսկ երկրորդ օրինակը՝ անջատվող գործի մեջ:

5. Նոր գործի անջատման և հետագա ընթացքի մասին տեղյակ է պահվում մեղադրյալին, նրա օրինական ներկայացուցչին և պաշտպանին, ինչպես նաև տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին և նրանց ներկայացուցիչներին, որոնք մասնակցել են սկզբնական գործի վարույթին:

***(184-րդ հոդվածը լրաց. 25.05.06 ՀՕ-91-Ն)***

**Հոդված 185. Քրեական գործի հարուցումը մերժելը**

1. Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկվում է համապատասխան դատախազին:

2. Որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձին:

3. Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով որոշման պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում:

4. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա վերադաս դատախազը այն ստանալու պահից 7 օրվա ընթացքում վերացնում է բողոքարկվող որոշումը, հարուցում է քրեական գործ և նախաքննություն կատարելու համար այն ուղարկում է քննիչին կամ հաստատում է քրեական գործ հարուցելը մերժելու օրինականությունը:

5. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը:

***(185-րդ հոդվածը լրաց., խմբ., փոփ. 25.05.06 ՀՕ-91-Ն, լրաց. 21.02.07 ՀՕ-93-Ն, փոփ. 22.02.07 ՀՕ-129-Ն)***

**Հոդված 186. Հանցագործության մասին հաղորդումն ըստ ենթակայության հանձնելը**

Քրեական գործ հարուցելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է հանցագործության մասին հաղորդումն առանց գործ հարուցելու հանձնել ըստ ենթակայության, երբ քրեական գործի հարուցման հարցի լուծման համար

հանցանքի կատարման վայրում անհրաժեշտ է կատարել դեպքին առնչվող նախնական գործողություններ:

***(186-րդ հոդվածը խմբ. 25.05.06 ՀՕ-91-Ն)***

**Հոդված 187. Քրեական գործի ընթացքը դրա հարուցումից հետո**

Քրեական գործ հարուցելուց հետո՝

1) դատախազը նախաքննություն կատարելու համար գործն ուղարկում է քննիչին.

2) քննիչը ձեռնամուխ է լինում գործով նախաքննության կատարմանը՝ այդ մասին անհապաղ տեղյակ պահելով դատախազին.

3) հետաքննության մարմնի պետը հետաքննության մարմնի աշխատակցին հանձնարարում է կատարել քննչական անհետաձգելի գործողություններ կամ դրանք կատարում է անձամբ՝ քրեական գործ հարուցելու մասին անհապաղ տեղյակ պահելով դատախազին:

***(187-րդ հոդվածը փոփ. 22.02.07 ՀՕ-129-Ն)***

**Հոդված 188. Նախնական քննության պարտադիր լինելը**

1. Նախաքննությունը պարտադիր է բոլոր քրեական գործերով:

2. Հետաքննությունը կարող է լինել քննության սկզբնական փուլ՝ քրեական գործ հարուցելու պահից 10 օրվա ընթացքում:

***(188-րդ հոդվածը խմբ. 25.05.06 ՀՕ-91-Ն)***

**Հոդված 188[1]. Նախնական քննության ընդհանուր պայմանները**

1. Քննչական գործողությունների իրականացումը գիշերային ժամերին չի թույլատրվում, բացառությամբ անհետաձգելի դեպքերի:

2. Քննչական գործողություններ իրականացնելիս անթույլատրելի են նախնական քննության մասնակիցների նկատմամբ բռնության, սպառնալիքի և անօրինական այլ գործողությունների գործադրումը, ինչպես նաև նրանց կյանքի և առողջության համար վտանգավոր պայմանների ստեղծումը:

3. Քննիչը, քննչական գործողությունների իրականացմանը ներգրավելով կասկածյալին, մեղադրյալին, տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին, նրանց ներկայացուցիչներին կամ իրավահաջորդներին, ինչպես նաև սույն օրենսգրքի 81-րդ, 83-86-րդ հոդվածներում նշված անձանց, ճշտում է նրանց ինքնությունը, բացատրում իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև քննչական գործողության իրականացման ընդհանուր կարգը: Եթե քննչական գործողության իրականացմանը մասնակցում են տուժողը, վկան, փորձագետը կամ թարգմանիչը, ապա քննիչը նրանց համապատասխանաբար նախազգուշացնում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 338-րդ, 339-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

4. Քննիչն իրավունք ունի քննչական գործողության իրականացմանը ներգրավելու օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի պաշտոնատար անձանց, ինչի մասին նշում է կատարվում համապատասխան քննչական գործողության արձանագրությունում:

***(188[1] -րդ հոդվածը լրաց. 23.05.06 ՀՕ-104-Ն)***

**Հոդված 189. Նախաքննության մարմինները**

Քրեական գործերով նախաքննություն կատարում են քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության, ազգային անվտանգության հարկային և մաքսային մարմինների քննիչները:

***(189-րդ հոդվածը փոփ. 25.05.06 ՀՕ-91-Ն, խմբ., փոփ. 22.02.07 ՀՕ-129-Ն, փոփ. 02.11.07 ՀՕ-248-Ն, խմբ. 28.11.07 ՀՕ-270-Ն, 19.05.14 ՀՕ-28-Ն)***

**Հոդված 190. Քննչական ենթակայությունը**

1. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 104-164, 166-187, 191, 192, 195-201, 204, 212-214, 218, 222, 223, 225, 225[1] , 227-232, 235-249, 251-298, 300, 300.1, 300.2, 301, 301.1, 308-328, 331-332[3], 336, 341, 343-345[1] , 347-355 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են քննչական կոմիտեի քննիչները:

2. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 188, 189, 193, 194, 202, 203, 205-211 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են քննչական կոմիտեի կամ հարկային մարմինների քննիչները:

3. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 190, 217, 217[1] , 219-221, 224, 226, 233, 234, 250, 299, 302-307, 329, 329.1, 330, 384-397[1] հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են ազգային անվտանգության մարմինների քննիչները:

4. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 215 հոդվածով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործերով կատարում են ազգային անվտանգության կամ մաքսային մարմինների քննիչները:

5. Նախաքննությունը զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված, ինչպես նաև զորամասի տարածքում կատարված կամ ժամկետային զինվորական ծառայության զինծառայողներին կամ պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնում և կազմակերպություններում (որոնց բաժնետոմսերի կառավարման լիազորությունը հանձնված է պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնին) ծառայություն իրականացնող անձանց վերագրվող հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են քննչական կոմիտեի քննիչները:

6. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149, 150, 154[1] , 154[2] հոդվածներով կատարում են հատուկ քննչական ծառայության քննիչները:

Անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կարող է քննչական այլ մարմինների քննիչների վարույթից վերցնել և հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթին հանձնել քրեական գործեր, որոնք առնչվում են սույն մասում թվարկված պաշտոնատար անձանց

հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործություններին, կամ որոնցով այդ անձինք ճանաչված են որպես տուժող, ինչպես նաև ցանկացած այլ քրեական գործ, եթե դրա փաստական հանգամանքներով պայմանավորված՝ առկա է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը երաշխավորելու անհրաժեշտություն:

6.1. Նախաքննությունը հատուկ քննչական ծառայության ծառայողների՝ իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են ազգային անվտանգության մարմինների քննիչները:

7. Սույն հոդվածի երկրորդ և չորրորդ մասերով նախատեսված գործերով նախաքննություն կատարում է այն մարմինը, որը հարուցել է տվյալ քրեական գործը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործը դատախազը հանձնում է նախաքննության այլ մարմնի:

8. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 128, 165, 200, 208, 209, 216, 308-310, 314, 315, 333-335, 337-340, 342, 345 և 346 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում է նախաքննության այն մարմինը, որի վարույթում գտնվող գործի քննության ընթացքում բացահայտվել է այդ հանցագործությունը, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ և 6.1-ին մասերում նշված անձանց կատարած հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի:

9. Ազգային անվտանգության կամ մաքսային մարմինների քննիչները 188, 189, 205, 206, 235, 263, 266, 268, 271, 272, 275 և 325 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են նախաքննություն, եթե այդ հանցագործությունները բացահայտվել են իրենց վարույթում գտնվող գործի քննության ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործը դատախազը հանձնում է նախաքննության այլ մարմնի:

10. Տարբեր պետական մարմինների քննիչներին ենթակա հանցագործությունների վերաբերյալ գործերը մեկ վարույթում միացնելու կամ գործի քննության ընթացքում այլ քննիչին ենթակա և սույն հոդվածի ութերորդ մասով չնախատեսված հանցագործության բացահայտման դեպքում ենթակայության հարցը

որոշում է դատախազը: Այս կարգը չի տարածվում սույն հոդվածի 6-րդ և 6.1-ին մասերով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի վրա, որոնցից 6-րդ մասով նախատեսված քրեական գործերի նախաքննությունը կատարում են բացառապես հատուկ քննչական ծառայության քննիչները, իսկ 6.1-ին մասով նախատեսված քրեական գործերի նախաքննությունը կատարում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննիչները:

***(պարբերությունն ուժը կորցրել է 19.05.14 ՀՕ-28-Ն)***

***(190-րդ հոդվածը փոփ. 19.03.99 ՀՕ-287, լրաց. 11.09.01 ՀՕ-215, փոփ. 01.06.06 ՀՕ-61-Ն, խմբ. 25.05.06 ՀՕ-91-Ն, խմբ., փոփ. 22.02.07 ՀՕ-129-Ն, փոփ. 02.11.07 ՀՕ-248-Ն, խմբ. 28.11.07 ՀՕ-270-Ն, լրաց., փոփ. 18.03.09 ՀՕ-54-Ն, փոփ. 09.02.11 ՀՕ-36-Ն, փոփ., լրաց. 19.05.14 ՀՕ-28-Ն, լրաց. 21.06.14 ՀՕ-85-Ն)***

**Հոդված 192. Նախնական քննության կատարման սկիզբը**

1. Նախաքննությունը կատարվում է միայն քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելուց հետո:

2. Քրեական գործի հարուցումից հետո քննիչը և հետաքննության մարմնի աշխատակիցն անմիջապես ձեռնամուխ են լինում գործի քննությանը:

3. Եթե քրեական գործ հարուցել է քննիչը կամ հետաքննության մարմինը, և նրանց կողմից ընդունվել է իրենց վարույթ, ապա քրեական գործ հարուցելու և այն իրենց վարույթն ընդունելու մասին կազմվում է միասնական որոշում: Այս դատավարական փաստաթղթի պատճենն անմիջապես, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, ուղարկվում է դատախազին:

**Հոդված 196. Նախնական քննության ավարտը**

1. Նախաքննությունն ավարտվում է մեղադրական եզրակացություն, բժշկական բնույթի միջոցների կիրառման համար քրեական գործը դատարան ուղարկելու մասին կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կազմելով:

2. Հետաքննությունն ավարտելուց հետո հետաքննության մարմնի պետը գործն ուղարկում է քննիչին, որի մասին կայացվում է համապատասխան որոշում: Հետաքննությունն ավարտվում է, երբ՝

1) ավարտվում է հետաքննության ժամկետը.

2) մինչև հետաքննության ժամկետը լրանալն ի հայտ է գալիս հանցանք կատարած անձը.

3) դատախազը հետաքննության մարմնի վարույթում գտնվող գործը հանձնում է քննիչին՝ նախաքննություն կատարելու համար, կամ քննիչը ներգրավվում է գործի քննությանը:

**Հոդված 197. Նախնական քննության ժամկետները**

1. Հետաքննությունն ավարտվում է քրեական գործ հարուցելու պահից 10 օրվա ընթացքում:

2. Քրեական գործով նախաքննությունը պետք է ավարտվի ոչ ուշ, քան երկամսյա ժամկետում: Այդ ժամկետը հաշվվում է քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելու օրվանից և ավարտվում է գործը դատարան ուղարկելու մասին կամ գործով վարույթի կարճման մասին որոշման կայացման օրը:

3. Քրեական գործի նյութերին մեղադրյալի կամ նրա պաշտպանի ծանոթանալու ժամկետը չի մտնում գործի քննության ժամկետի մեջ: Եթե մեղադրյալը կամ նրա պաշտպանն առանց հարգելի պատճառների ձգձգում են քրեական գործին ծանոթանալը, քննիչի որոշմամբ կարող է սահմանափակվել ծանոթանալու ժամկետը:

4. Նախաքննության ժամկետի մեջ չի հաշվակցվում այն ժամանակը, որի ընթացքում նախաքննությունը սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով եղել է կասեցված:

5. Նախաքննության ժամկետը կարող է երկարացնել դատախազը՝ քննիչի պատճառաբանված որոշման հիման վրա:

6. Քննության ժամկետը երկարացնելու մասին պատճառաբանված որոշումը քննիչը պարտավոր է ներկայացնել դատախազին՝ քննության ժամկետը լրանալու օրվանից առնվազն 3 օր առաջ:

7. Քրեական գործի նախաքննությունը վերսկսելու, քրեական գործը լրացուցիչ քննության վերադարձնելու, ինչպես նաև կարճված գործի վարույթը նորոգելու դեպքերում նախաքննությունը պետք է ավարտվի մեկամսյա ժամկետում՝ համապատասխանաբար գործի նախաքննությունը վերսկսելու մասին որոշում կայացնելու, լրացուցիչ քննության վերադարձված քրեական գործը քննիչի կողմից ստանալու, գործի վարույթը նորոգելու մասին որոշում կայացնելու օրվանից սկսած: Այդ ժամկետի հետագա երկարացումը կարող է կատարվել սույն հոդվածի հինգերորդ մասով սահմանված կարգով:

***(197-րդ հոդվածը լրաց. 25.05.06 ՀՕ-91-Ն)***

**Հոդված 225. Խուզարկություն կատարելու հիմքերը**

1. Քննիչը, բավարար հիմքեր ունենալով ենթադրելու, որ որևէ շենքում կամ այլ տեղ կամ որևէ անձի մոտ գտնվում են հանցագործության գործիքներ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաներ ու արժեքներ, ինչպես նաև այլ առարկաներ և փաստաթղթեր, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար, խուզարկություն է կատարում դրանք գտնելու և վերցնելու համար:

2. Խուզարկություն կարող է կատարվել նաև հետախուզվող անձանց, հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձանց, ինչպես նաև դիակները հայտնաբերելու համար:

3. Բնակարանի խուզարկությունը կատարվում է միայն դատարանի որոշմամբ:

***(225-րդ հոդվածը լրաց. 25.05.06 ՀՕ-91-Ն)***

**Հոդված 226. Առգրավում կատարելու հիմքերը**

1. Գործի համար նշանակություն ունեցող որոշակի առարկաներ և փաստաթղթեր վերցնելու անհրաժեշտության դեպքում և, եթե ստույգ հայտնի են, թե որտեղ և ում մոտ են դրանք գտնվում, քննիչը կատարում է առգրավում:

2. Այն փաստաթղթերի առգրավումը, որոնք պարունակում են պետական գաղտնիք, կատարվում է միայն դատախազի թույլտվությամբ՝ համապատասխան հիմնարկի ղեկավարի հետ համաձայնեցված կարգով:

3. Ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները, պաշտոնատար անձինք և քաղաքացիներն իրավունք չունեն հրաժարվել քննիչին հանձնելու այն առարկաները, փաստաթղթերը կամ դրանց պատճենները, որոնք պահանջվել են նրա կողմից:

**Հոդված 227. Խուզարկությանը և առգրավմանը ներկա գտնվող անձինք**

1. Խուզարկությունը և առգրավումը կատարվում է ընթերակաների մասնակցությամբ:

2. Անհրաժեշտության դեպքում խուզարկությանը և առգրավմանը մասնակցում են թարգմանիչ և մասնագետ:

3. Խուզարկություն և առգրավում կատարելիս պետք է ապահովվի այն անձի և նրա ընտանիքի չափահաս անդամի ներկայությունը, որոնց ներկայությամբ կատարվում է խուզարկությունը կամ առգրավումը: Նրանց ներկայությունն անհնարին լինելու դեպքում հրավիրվում է բնակարանային շահագործման կազմակերպության կամ տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչ:

4. Ձեռնարկություններին, հիմնարկներին, կազմակերպություններին, զորամասերին պատկանող շինություններում առգրավումը և խուզարկությունը կատարվում է նրանց ներկայացուցչի ներկայությամբ:

5. Անձինք, որոնց մոտ կատարվում է խուզարկություն կամ առգրավում, ինչպես նաև ընթերակաները, մասնագետները, թարգմանիչները, ներկայացուցիչները, պաշտպաններն իրավունք ունեն ներկա գտնվել քննիչի բոլոր գործողություններին, անել հայտարարություններ, որոնք պետք է մտցվեն արձանագրության մեջ:

**Հոդված 228. Առգրավում և խուզարկություն կատարելու կարգը**

1. Քննիչն իրավունք ունի մուտք գործել բնակելի կամ այլ շինություն՝ խուզարկություն կամ առգրավում կատարելու մասին որոշման հիման վրա: Բանկային, նոտարական, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող

տեղեկությունների ստացման համար խուզարկությունը կամ առգրավումը կատարվում է դատարանի որոշման հիման վրա:

2. Խուզարկություն կամ առգրավում կատարելուց առաջ քննիչը պարտավոր է անձին, որի մոտ կատարվում է խուզարկություն կամ առգրավում, ծանոթացնել որոշմանը: Այդ մասին նրանից վերցվում է ստորագրություն:

3. Խուզարկություն կատարելիս քննիչը կամ մասնագետը կարող է օգտագործել տեխնիկական միջոցներ, որի մասին նշվում է խուզարկության արձանագրության մեջ:

4. Քննիչը պարտավոր է ձեռնարկել միջոցներ, որպեսզի չհրապարակվեն առգրավման և խուզարկության փաստը, ինչպես նաև դրանց արդյունքները և խուզարկվողի անձնական կյանքի հանգամանքները:

5. Քննիչն իրավունք ունի խուզարկության կամ առգրավման վայրում գտնվող անձանց արգելել հեռանալու այդ տեղից, ինչպես նաև հաղորդակցություն ունենալու միմյանց և այլ անձանց հետ՝ մինչև քննչական գործողության ավարտը:

6. Առգրավման մասին որոշումը ներկայացնելուց և հրապարակելուց հետո քննիչն առաջարկում է կամովին հանձնել առգրավման ենթակա առարկաները և փաստաթղթերը, իսկ առաջարկը մերժվելու դեպքում առգրավումը կատարում է հարկադիր կարգով: Եթե որոնվող առարկաները որոշման մեջ նշված տեղում չեն հայտնաբերվում, ապա քննիչի որոշմամբ կարող է կատարվել խուզարկություն, բացառությամբ սույն օրենսգրքի 225-րդ հոդվածի երրորդ մասով և սույն հոդվածի առաջին մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի, երբ խուզարկությունը կարող է կատարվել միայն դատարանի որոշման հիման վրա:

7. Խուզարկություն կատարելիս որոշումը ներկայացնելուց և հրապարակելուց հետո քննիչն առաջարկում է հանձնել առգրավման ենթակա առարկաները և փաստաթղթերը կամ թաքնված անձին: Եթե դրանք հանձնվում են կամովին, ապա այդ մասին նշվում է արձանագրության մեջ: Որոնվող առարկաների, փաստաթղթերի կամ թաքնված անձի չհանձնվելու կամ ոչ ամբողջությամբ հանձնվելու դեպքում կատարվում է խուզարկություն:

8. Վերցված բոլոր առարկաները և փաստաթղթերը ներկայացվում են քննչական գործողության մասնակիցներին, մանրամասն նկարագրվում են արձանագրության մեջ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ կնքվում քննիչի կնիքով:

9. Խուզարկություն և առգրավում կատարելիս քննիչն իրավունք ունի բացել փակված շինություններն ու պահեստարանները, եթե դրանց տերը հրաժարվում է կամովին բացել դրանք: Ընդ որում, պետք է խուսափել փականքները, դռները և այլ առարկաներն առանց անհրաժեշտության վնասելուց:

***(228-րդ հոդվածը լրաց. 14.12.04 ՀՕ-28-Ն, 25.05.06 ՀՕ-91-Ն, 21.06.14 ՀՕ-115-Ն)***

**Հոդված 229. Անձնական խուզարկությունը**

1. Շինությունում խուզարկություն կատարելիս բավարար հիմքերի առկայության դեպքում քննիչը կարող է կատարել անձնական խուզարկություն և վերցնել այդտեղ գտնվող անձի հագուստի մեջ, իրերում կամ մարմնի վրա գտնվող առարկաները և փաստաթղթերը, որոնք գործով կարող են ունենալ ապացուցողական նշանակություն:

2. Անձնական խուզարկությունը, առանց այդ մասին որոշում կայացնելու, կարող է կատարվել՝

1) հանցագործության մեջ կասկածվողին բռնելիս և ոստիկանություն կամ այլ իրավապահ մարմին բերելիս.

2) հանցագործության մեջ կասկածվողին ձերբակալելիս և մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կալանքը կիրառելիս.

3) երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ այն շինությունում գտնվող անձը, որտեղ խուզարկություն է կատարվում, իր մոտ կարող է թաքցնել փաստաթղթեր կամ այլ առարկաներ, որոնք գործով կարող են ունենալ ապացուցողական նշանակություն:

3. Անձնական խուզարկությունը կարող է կատարվել քննիչի կողմից՝ խուզարկվողի հետ նույն սեռի ընթերակաների և մասնագետի մասնակցությամբ:

***(229-րդ հոդվածը խմբ. 25.05.06 ՀՕ-91-Ն)***

**Հոդված 230. Խուզարկության և առգրավման արձանագրությունը**

1. Խուզարկությունը և առգրավումն ավարտելիս քննիչը կազմում է համապատասխան արձանագրություններ, որոնց մեջ պետք է նշվեն՝ քննչական գործողության կատարման տեղը, ժամանակը, հանգամանքները, արդյոք կամովին են հանձնվել որոնվող առարկաները և անձինք, խուզարկություն կատարող անձի անունը, ազգանունը, պաշտոնը, ընթերակաների անունները, ազգանունները և հասցեները, ինչպես նաև քննչական գործողության այլ մասնակիցների անունները, ազգանունները, պաշտոնները և դատավարական կարգավիճակը:

2. Ամբողջ վերցվածի մասին պետք է նշվի քննչական գործողության արձանագրության մեջ՝ ճշգրիտ նշելով դրանց քանակը, չափը, քաշը, անհատական հատկանիշները և այլ առանձնահատկությունները:

3. Եթե քննչական գործողությունները կատարելիս փորձեր են եղել ոչնչացնելու կամ թաքցնելու հայտնաբերված առարկաները կամ փաստաթղթերը, ապա այդ մասին նշվում է արձանագրության մեջ:

4. Քննիչը պարտավոր է արձանագրությանը ծանոթացնել քննչական գործողության բոլոր մասնակիցներին, որոնք ծանոթանալուց հետո ստորագրում են արձանագրությունը և իրավունք ունեն պահանջել արձանագրության մեջ մտցնելու իրենց դիտողությունները:

**Հոդված 231. Խուզարկության և առգրավման արձանագրության պատճենի հանձնման պարտադիր լինելը**

1. Խուզարկության կամ առգրավման արձանագրության պատճենը ստորագրությամբ հանձնվում է այն անձին, ում մոտ կատարվում է քննչական գործողությունը, կամ նրա ընտանիքի չափահաս անդամներին, իսկ նրանց բացակայության դեպքում՝ այն բնակարանային շահագործման կազմակերպության կամ տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցչին, որի տարածքում կատարվել է քննչական գործողությունը:

2. Եթե խուզարկությունը կամ առգրավումը կատարվել է ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության, զորամասի տարածքում, արձանագրության պատճենը հանձնվում է դրանց ներկայացուցչին:

**Հոդված 232. Գույքի վրա կալանք դնելը**

1. Գույքի վրա կալանք դնելը կիրառվում է քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը, բռնագանձումը և դատական ծախսերն ապահովելու համար:

2. Կալանք դրվում է կասկածյալի և մեղադրյալի, ինչպես նաև այն անձանց գույքի վրա, որոնց վրա, կասկածյալի և մեղադրյալի գործողությունների համար, կարող է դրվել նյութական պատասխանատվություն՝ անկախ նրանից, թե ինչպիսի գույք է և ում մոտ է գտնվում:

2.1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածի համաձայն՝ բռնագանձման ենթակա գույքի վրա կալանքը դրվում է անկախ հանցանք կատարած անձի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից:

3. Ամուսինների կամ ընտանիքի համատեղ սեփականության դեպքում կալանքը դրվում է մեղադրյալի բաժնի վրա: Բավարար ապացույցների առկայության դեպքում, որ համատեղ սեփականությունն ավելացել կամ ձեռք է բերվել հանցավոր ճանապարհով վաստակած միջոցների հաշվին, կալանքը կարող է դրվել ամուսինների կամ ընտանիքի ամբողջ գույքի կամ դրա որոշակի բաժնի վրա:

4. Կալանք չի կարող դրվել այն գույքի վրա, որի վրա օրենքի համաձայն չի կարող տարածվել բռնագանձում:

***(232-րդ հոդվածը լրաց. 21.06.14 ՀՕ-115-Ն)***

**Հոդված 233. Գույքի վրա կալանք դնելու հիմքերը**

1. Գույքի վրա կալանք դնելը քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ գործով հավաքված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը, մեղադրյալը կամ այն անձը, որի մոտ գտնվում է գույքը, կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել բռնագրավման ենթակա գույքը:

1.1. Քրեական վարույթն իրականացնող մարմինն անհապաղ կալանք է դնում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված բռնագանձման ենթակա գույքի վրա:

2. Գույքի վրա կալանք դնելը կատարվում է հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի որոշման հիման վրա:

3. Գույքի վրա կալանք դնելու մասին որոշման մեջ պետք է նշվի կալանքի ենթակա գույքը, ինչպես նաև գույքի այն արժեքը, որի վրա բավական է կալանք դնել՝ քաղաքացիական հայցը և դատական ծախսերն ապահովելու համար:

4. Անհրաժեշտության դեպքում, երբ հիմքեր կան ենթադրելու, որ գույքը կամովին չի հանձնվի, կարող է կատարվել խուզարկություն՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով:

***(233-րդ հոդվածը լրաց 28.11.06 ՀՕ-207-Ն, խմբ. 21.06.14 ՀՕ-115-Ն)***

**Հոդված 234. Կալանքի ենթակա գույքի արժեքի որոշումը**

1. Կալանքի ենթակա գույքի արժեքը որոշվում է դրա շուկայական գնով:

2. Այն գույքի արժեքը, որի վրա քաղաքացիական հայցվորի կամ դատախազի հարուցած քաղաքացիական հայցի ապահովման համար դրվում է կալանք, պետք է համապատասխանի հայցագնի չափին:

3. Մի քանի մեղադրյալներից կամ նրանց գործողությունների համար պատասխանող անձանցից յուրաքանչյուրի գույքի՝ կալանքի ենթակա բաժինը որոշելիս հաշվի է առնվում հանցագործությանը մեղադրյալների մասնակցության աստիճանը, սակայն քաղաքացիական հայցն ապահովելու համար նրանցից որևէ մեկի գույքի վրա կալանք կարող է դրվել լրիվ չափով:

**Հոդված 235. Գույքի վրա կալանք դնելու որոշման կատարման կարգը**

1. Հետաքննության մարմինը, քննիչը կամ դատախազը գույքի սեփականատիրոջը կամ տիրապետողին ստորագրությամբ հանձնում են գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը և պահանջում հանձնել այն: Այդ պահանջը կամովին կատարելուց հրաժարվելու դեպքում գույքի վրա կալանքը դրվում է հարկադիր կարգով:

2. Քրեական գործի նախնական քննության ավարտից հետո դատարանի կայացրած որոշմամբ գույքի վրա կալանք դնելն իրականացնում է դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը:

3. Գույքի վրա կալանք դնելիս հնարավորության դեպքում ներգրավվում է մասնագետ-ապրանքագետ, որը որոշում է դրա մոտավոր արժեքը:

4. Գույքի վրա կալանք դնելուն ներկա գտնվող սեփականատերը կամ գույքի տիրապետողն իրավունք ունի որոշել, թե առաջին հերթին որ արժեքների կամ այլ առարկաների վրա է անհրաժեշտ կալանք դնել՝ ապահովելու համար որոշման մեջ նշված գումարները:

5. Հետաքննության մարմինը, քննիչը կամ դատախազը գույքի վրա կալանք դնելու մասին կազմում է արձանագրություն, իսկ հարկադիր կատարողը՝ օրենքով նախատեսված այլ փաստաթուղթ: Արձանագրության մեջ (փաստաթղթում) մասնավորապես թվարկվում է ամբողջ գույքը, որի վրա կալանք է դրված՝ ճշգրիտ նշելով անվանումը, քանակը, քաշը, մաշվածության աստիճանը, այլ անհատական հատկանիշները, հնարավորության դեպքում՝ արժեքը, նշվում է, թե ինչպիսի գույք է վերցված և ինչպիսին թողնված պահպանության, շարադրվում է կալանադրված գույքը՝ այլ անձանց պատկանելու մասին ներկաների հայտարարությունները:

6. Համապատասխան արձանագրության (փաստաթղթի) պատճենն ստորագրությամբ հանձնվում է այն գույքի սեփականատիրոջը կամ տիրապետողին, որի վրա կալանք է դրված, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա ընտանիքի չափահաս անդամներից որևէ մեկին, բնակարանային շահագործման կազմակերպության կամ տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցչին: Ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության տարածքում գտնվող գույքի վրա կալանք դնելիս համապատասխան արձանագրության (փաստաթղթի) պատճենն ստորագրությամբ հանձնվում է դրանց ներկայացուցչին:

**Հոդված 236. Կալանքի տակ գտնվող գույքի պահպանությունը**

1. Բացի անշարժ գույքից և մեծածավալ առարկաներից, այլ կալանադրված գույքը, որպես կանոն, վերցվում է:

2. Թանկարժեք մետաղները և քարերը, ադամանդը, օտարերկրյա տարադրամը, չեկերը, արժեթղթերը և վիճակախաղային տոմսերը պահպանման համար հանձնվում են Հայաստանի Հանրապետության գանձապետարան, դրամական գումարները մուծվում են այն դատարանի դեպոզիտ, որին ընդդատյա է տվյալ գործը, վերցված մյուս առարկաները կնքվում և պահվում են այն մարմնում, որի որոշմամբ գույքի վրա կալանք է դրվել, կամ պահպանության են հանձնվում բնակարանային շահագործման կազմակերպությանը կամ տեղական իշխանության ներկայացուցչին:

3. Չվերցված գույքը, որի վրա կալանք է դրված, կնքվում և պահպանության համար թողնվում է գույքի սեփականատիրոջը կամ տիրապետողին կամ նրա ընտանիքի չափահաս անդամներին: Նրանց բացատրվում է տվյալ գույքն օտարելու կամ փչացնելու համար օրենքով նախատեսված պատասխանատվությունը, ինչի մասին նրանցից վերցվում է ստորագրություն:

**Հոդված 237. Գույքի վրա կալանք դնելու բողոքարկումը**

Գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատախազին, սակայն ներկայացված բողոքը չի կասեցնում համապատասխան որոշման ի կատար ածելը:

**Հոդված 238. Գույքը կալանքից ազատելը քրեական դատավարության կարգով**

1. Գույքը, քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, ազատվում է կալանքից, եթե քաղաքացիական հայցը հետ վերցվելու, կասկածյալին կամ մեղադրյալին վերագրվող արարքի որակումը փոխվելու հետևանքով կամ այլ պատճառներով վերացել է գույքի վրա կալանք դնելուց բխող սահմանափակումների կիրառման անհրաժեշտությունը:

2. Քաղաքացիական հայցվորի կամ այլ շահագրգիռ անձանց միջնորդությամբ դատարանն իրավունք ունի գույքի վրա դրված կալանքը պահպանել նաև քրեական գործով վարույթի ավարտից հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

**Հոդված 279. Դատարանի որոշմամբ կատարվող քննչական**

**գործողությունները**

Դատարանի որոշմամբ կատարվում են բնակարանի խուզարկությունը, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության սահմանափակման հետ կապված քննչական գործողությունները, ինչպես նաև բանկային, ապահովագրական, նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման համար խուզարկությունները և առգրավումները:

***(279-րդ հոդվածը լրաց 28.11.06 ՀՕ-207-Ն, լրաց. 21.06.14 ՀՕ-115-Ն)***

**Հոդված 360. Դատավճիռ կայացնելիս դատարանի լուծմանը ենթակա հարցերը**

1. Դատավճիռ կայացնելիս դատարանը ներկայացված հաջորդականությամբ լուծում է հետևյալ հարցերը՝

1) ապացուցված է արդյոք արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է ամբաստանյալը.

2) այդ արարքը համապատասխանում է արդյոք քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմերի հատկանիշներին.

3) ապացուցված է արդյոք ամբաստանյալի կողմից այդ արարքը կատարելը.

4) ապացուցված է արդյոք ամբաստանյալի մեղավորությունը տվյալ հանցանքը կատարելու մեջ և, եթե այո, ապա քրեական օրենսգրքի որ հոդվածով, մասով, կետով է նախատեսված այն.

5) ապացուցված է արդյոք ամբաստանյալի պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների առկայությունը.

6) ենթակա է արդյոք պատժի ամբաստանյալն իր կատարած հանցանքի համար.

7) ինչ պատիժ պետք է նշանակվի ամբաստանյալի նկատմամբ.

8) ամբաստանյալն արդյոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը.

9) ***(կետն ուժը կորցրել է 24.12.04 ՀՕ-61-Ն)***

10) քաղաքացիական հայցը ենթակա է արդյոք բավարարման, ում օգտին և ինչ չափով, ինչպես նաև պատճառված գույքային վնասը ենթակա է արդյոք հատուցման, եթե քաղաքացիական հայց չի հարուցվել.

11) վերացվելու է արդյոք հանցագործությամբ պատճառված գույքային վնասի հատուցումը կամ գույքի հնարավոր բռնագրավումն ապահովելու համար գույքի վրա դրված կալանքը.

12) ինչ անել իրեղեն ապացույցները.

13) վերացվելու, փոխվելու կամ ընտրվելու է արդյոք խափանման միջոց և ինչպիսի միջոց.

14) ում վրա և ինչ չափով պետք է դրվեն դատական ծախսերը.

15) հանցանքը կատարելու մեջ մեղավոր ճանաչված ամբաստանյալի նկատմամբ անհրաժեշտ է արդյոք կիրառել հարկադրական բուժում գինեմոլությունից և թմրամոլությունից, նրա նկատմամբ նշանակել արդյոք խնամակալություն

16) ապացուցված է արդյոք, որ բռնագանձման ենթակա գույքը ստացվել է հանցագործության կատարման արդյունքում կամ այդ գույքի օգտագործումից կամ օգտագործվել է կամ նախատեսվել է օգտագործվել որպես հանցագործության գործիք կամ միջոց կամ ուղղվել է ահաբեկչության ֆինանսավորմանը կամ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով նախատեսված մաքսանենգության առարկա:

(…):

***(360-րդ հոդվածը փոփ. 24.12.04 ՀՕ-61-Ն, լրաց. 21.06.14 ՀՕ-115-Ն)***

## Հոդված 474. Միջպետական հարաբերություններում քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու կարգը

1. Հայաստանի Հանրապետության դատարանների, դատախազների, քննիչների, հետաքննության մարմինների հանձնարարությամբ կամ խնդրանքով (այսուհետ՝ հարցումով) օտարերկրյա պետության տարածքում հարցաքննության, զննության, առգրավման, խուզարկության, փորձաքննության և սույն օրենսգրքով նախատեսված այլ դատավարական գործողությունների կատարումը, ինչպես նաև

օտարերկրյա պետության իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց (այսուհետ՝ իրավասու մարմիններ) հարցումով Հայաստանի Հանրապետության տարածքում սույն օրենսգրքով նախատեսված դատավարական գործողությունների կատարումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ այդ պայմանագրերով և սույն օրենսգրքով սահմանված կարգով:

2. Օտարերկրյա պետության իրավասու մարմինների հարցումով Հայաստանի Հանրապետության տարածքում սույն օրենսգրքով նախատեսված դատավարական գործողություններ կատարելիս Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը կիրառում են սույն օրենսգրքի նորմերը՝ համապատասխան միջազգային պայմանագրերով նախատեսված բացառություններով:

Օտարերկրյա պետության իրավասու մարմինների հարցումների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում դատավարական գործողություններ կատարելիս Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը կարող են կիրառել համապատասխան օտարերկրյա պետության քրեական դատավարության օրենսդրության նորմերը, եթե վերջիններիս կիրառումը նախատեսված է Հայաստանի Հանրապետության և տվյալ օտարերկրյա պետության մասնակցությամբ գործող միջազգային պայմանագրով:

Օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների հարցումները կատարվում են սույն օրենսգրքով նախատեսված ժամկետներում, եթե համապատասխան միջազգային պայմանագրով այլ ժամկետ սահմանված չէ:

***(474-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 475. Իրավական օգնության հարցերով հաղորդակցություն իրականացնող մարմինները**

1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու հարցով հաղորդակցությունն իրականացվում է՝

1) մինչդատական վարույթում գտնվող գործերով դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ հարցումները կատարելու առնչությամբ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջոցով.

2) դատարանի վարույթում գտնվող գործերով դատավարական գործողություններ, այդ թվում՝ դատավճիռներ կատարելու վերաբերյալ հարցումները կատարելու առնչությամբ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության միջոցով:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված լինելու դեպքում հաղորդակցությունը կարող է իրականացվել նաև դիվանագիտական ուղիներով՝ օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների միջոցով, որոնք, համապատասխան հարցումներն ստանալով, անհապաղ ներկայացնում են սույն մասով նախատեսված իրավասու մարմին՝ կատարման ներկայացնելու համար:

2. Եթե դատավարական գործողություններ կատարելու հարցումը տալիս են Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, ապա նրանք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, կազմած հարցումները ներկայացնում են սույն հոդվածի առաջին մասով սահմանված իրավասու համապատասխան մարմին՝ դրա կատարման նպատակով օտարերկրյա պետության իրավասու մարմին փոխանցելու համար:

Օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի հարցումը կատարելուց և դա հոդվածի առաջին մասով նախատեսված իրավասու մարմին ներկայացնելուց հետո վերջիններս կատարումն անհապաղ տրամադրում են հարցումը կազմած Հայաստանի Հանրապետության դատարանին, դատախազին, քննիչին, հետաքննության մարմնին:

3. Եթե դատավարական գործողություններ կատարելու հարցումը տրվել է օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից, և Հայաստանի

Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ այն ներկայացվել է սույն հոդվածի առաջին մասով նախատեսված իրավասու մարմին, ապա վերջինս հարցումը կատարման է ներկայացնում Հայաստանի Հանրապետության այն դատարան, դատախազին, քննիչին, հետաքննության մարմին, որոնք, սույն օրենսգրքին համապատասխան, իրավասու են կատարելու տվյալ հարցումը:

Դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը հանձնարարությունը կատարելուց հետո այն ներկայացնում են սույն հոդվածի առաջին մասով իրավասու համապատասխան մարմին, որը կատարումն անհապաղ փոխանցում է օտարերկրյա պետության իրավասու մարմին:

4. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ հարցում տալը, հարցման առաքումը և դրա կատարման արդյունքների փոխանցումը կարող են իրականացվել օտարերկրյա պետության համապատասխան իրավասու մարմնի և Հայաստանի Հանրապետության համապատասխան դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի միջև անմիջական հաղորդակցության միջոցով:

Ընդ որում, եթե անմիջական հաղորդակցության միջոցով օտարերկրյա պետության իրավասու մարմնից ստացված հարցման կատարումը չի մտնում հարցումն ստացած Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի իրավասության մեջ, ապա անհապաղ հարցումը վերահասցեագրվում է Հայաստանի Հանրապետության իրավասու դատարան, դատախազին, քննիչին, հետաքննության մարմին՝ այդ մասին ծանուցելով հարցումը տված օտարերկրյա պետության համապատասխան իրավասու մարմնին:

Վերահասցեագրման կարգով հարցումը ստացած Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը հարցումը կատարում և օտարերկրյա պետության իրավասու մարմին են փոխանցում սույն մասով նախատեսված կարգով, միաժամանակ սույն հոդվածի առաջին մասով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմնին ծանուցելով հարցման և դրա կատարման մասին:

Սույն մասով նախատեսված դեպքերում Հայաստանի Հանրապետության համապատասխան դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը սույն հոդվածի առաջին մասում նշված համապատասխան իրավասու մարմնին ծանուցում են անմիջական հաղորդակցության միջոցով փոխադարձորեն իրականացված յուրաքանչյուր հարցման, դրա ստացման և կատարման մասին՝ համառոտակի նշելով հարցումը տված մարմնի անվանումը (պաշտոնատար անձի անունը և պաշտոնը), հարցման բովանդակությունը, կատարող մարմինը կամ պաշտոնատար անձը, կատարման բովանդակությունը, հարցման տրման և կատարման ժամկետները:

5. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ օտարերկրյա պետության իրավասու մարմնից ստացված հարցման կատարումը անհնար է կամ չի բխում տվյալ միջազգային պայմանագրից, ապա օտարերկրյա պետության համապատասխան մարմինը սույն հոդվածով սահմանված կարգով ծանուցում է հարցման կատարման անհնարինության և դրա պատճառների մասին:

***(475-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 476. Մեկից ավելի միջազգային պայմանագրերով նախատեսված հարցումները կատարելը**

1. Եթե օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից դատավարական գործողությունների վերաբերյալ հարցումների կատարման պարտականությունը բխում է տվյալ պետության հետ կնքված՝ Հայաստանի Հանրապետության մեկից ավելի միջազգային պայմանագրերից, ապա կիրառվում են հետևյալ կանոնները.

1) եթե հարցման մեջ նշված է, թե որոշակի որ միջազգային պայմանագրի հիման վրա է այն կազմվել և ներկայացվել, ապա հարցումը կատարող Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը ղեկավարվում են այդ միջազգային պայմանագրով.

2) եթե հարցման մեջ նշված են տվյալ օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության միջև գործող մեկից ավելի միջազգային պայմանագրեր, ապա հարցումը կատարող Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը,

քննիչը, հետաքննության մարմինը ղեկավարվում են հարցման մեջ նշված այն միջազգային պայմանագրով, որն առավել ամբողջական լուծում է տալիս հարցման կատարման հետ կապված հարցերին, միաժամանակ կիրառելով մյուս պայմանագրի (պայմանագրերի) դրույթները, որոնք նախատեսված չեն առավել ամբողջական լուծում տվող միջազգային պայմանագրով, բայց հարցումն առավել լրիվ և արագ կատարելու հնարավորություն են տալիս.

3) եթե հարցման մեջ նշում չկա տվյալ պետության և Հայաստանի Հանրապետության միջև գործող որևէ միջազգային պայմանագրի վերաբերյալ, ապա հարցումը կատարող Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը ղեկավարվում են այն միջազգային պայմանագրով, որը առավել ամբողջական լուծում է տալիս հարցման լիարժեք կատարման հետ կապված հարցերին, որի ընթացքում չի բացառվում նաև տվյալ օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության միջև գործող մյուս պայմանագրերի այն դրույթների կիրառումը, որոնք լրացնում են այն պայմանագրին, որով ղեկավարվում են դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը:

2. Եթե Հայաստանի Հանրապետության և հարցում ներկայացրած օտարերկրյա պետության մասնակցությամբ գործում է բազմակողմ միջազգային պայմանագիր, որը հանձնման հարցերով այդ պայմանագրին գերակայություն է տալիս կողմերի միջև գործող և հանձնման հարցեր կարգավորող այլ միջազգային պայմանագրերի նկատմամբ, ապա Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը ղեկավարվում են այդ բազմակողմ միջազգային պայմանագրով:

***(476-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

## Հոդված 477. Միջազգային պայմանագրերից բխող հարցումների կատարումը մերժելը

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա օտարերկրյա պետության իրավասու մարմինների ներկայացրած դատավարական

գործողությունների վերաբերյալ հարցումների կատարումը կարող է մերժվել այդ պայմանագրերով նախատեսված հիմքերով:

Ընդ որում, եթե հարցումը ներկայացրել է այն օտարերկրյա պետության իրավասու մարմինը, որի հետ Հայաստանի Հանրապետությունը կապված է մեկից ավելի համապատասխան միջազգային պայմանագրերով, ապա հարցման կատարումը կարող է մերժվել միայն այն դեպքում, եթե մերժման հիմք հանդիսացող հանգամանքը (պայմանը) նախատեսված է բոլոր միջազգային պայմանագրերով՝ անկախ նրանից, թե հարցումը կազմվել և ներկայացվել է մերժման հիմք հանդիսացած հանգամանքը (պայմանը) նախատեսող թե այլ միջազգային պայմանագրին համապատասխան, կամ եթե հարցման կատարումը կարող է վնասել Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը, ինքնիշխանությունը, ազգային անվտանգությունը, և նշված հիմքերով հարցման կատարման մերժման հնարավորությունը նախատեսված է տվյալ օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային պայմանագրերից թեկուզ մեկով:

***(477-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 478. Հանցագործություն կատարած անձանց հանձնելը օտարերկրյա պետությանը**

1. Հայաստանի Հանրապետության տարածքում հանցագործություն կատարած օտարերկրյա պետության քաղաքացիները, ինչպես նաև օտարերկրյա պետության տարածքում մշտական բնակության վայր ունեցող քաղաքացիություն չունեցող անձինք, նրանց նկատմամբ համապատասխան օտարերկրյա պետությունում քրեական վարույթ սկսելու կամ Հայաստանի Հանրապետության տարածքում սույն օրենսգրքին համապատասխան սկսված վարույթը տվյալ օտարերկրյա պետությունում շարունակելու նպատակով կարող են տվյալ օտարերկրյա պետությանը հանձնվել այդ պետության և Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային պայմանագրով նախատեսված դեպքերում:

Տվյալ օտարերկրյա պետության իրավասու մարմիններ են փոխանցվում նաև հանձնվող անձի կատարած հանցանքի վերաբերյալ Հայաստանի

Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի վարույթում առկա բոլոր փաստաթղթերը և այլ նյութեր՝ համապատասխան միջազգային պայմանագրով սահմանված կարգով:

Փաստաթղթերի և այլ նյութերի փոխանցման կարգը միջազգային պայմանագրով նախատեսված կամ սահմանված չլինելու դեպքում դրանց փոխանցումը կարող է իրականացվել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետության կենտրոնական մարմինների կամ անմիջական հաղորդակցություն իրականացնող դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի և օտարերկրյա պետության իրավասու մարմնի հետ ձեռք բերված պայմանավորվածությանը համապատասխան:

Փոխանցված փաստաթղթերի մեկական օրինակները (պատճենները) պետք է պահվեն փաստաթղթերը պատրաստած կամ տրամադրած՝ Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի մոտ:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված անձանց՝ այդ մասով նախատեսված նպատակներով օտարերկրյա պետությանը հանձնելը կարող է իրականացվել այդ անձանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում հանցավոր արարքը կատարելու կամ այդ առնչությամբ քրեական վարույթ հարուցելու պահից մինչև տվյալ անձի նկատմամբ դատավճիռ կայացնելու պահն ընկած ժամանակահատվածում կամ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով նախատեսված այլ ժամկետում:

***(478-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 479. Հանձնման թույլտվության վերաբերյալ կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշում ընդունելու իրավասություն ունեցող մարմինները և այդ որոշման բողոքարկման կարգը**

1. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված է հանցագործություն կատարած անձի հանձնումը այդ պայմանագրի մասնակից համարվող օտարերկրյա պետությանը, և եթե պայմանագրով այլ բան

նախատեսված չէ, ապա Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող անձի նկատմամբ՝

1) հանձնման թույլտվության կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշումներն ընդունում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը, եթե գործը գտնվում է մինչդատական վարույթում.

2) հանձնումը մերժելու վերաբերյալ որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը, եթե գործը գտնվում է դատական վարույթի ընթացքում, ինչպես նաև այն դեպքում, երբ տվյալ անձի վերաբերյալ կա օրինական ուժի մեջ մտած դատավճիռ.

3) հանձնման թույլտվության վերաբերյալ որոշումը ընդունում է համապատասխանաբար գործը քննող կամ դատավճիռը կայացրած դատարանը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի միջնորդությամբ այն դեպքում, երբ գործը գտնվում է դատական վարույթի ընթացքում, կամ տվյալ անձի վերաբերյալ կա օրինական ուժի մեջ մտած դատավճիռ:

2. Հանձնման թույլտվության կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինն ընդունված որոշման մասին տեղեկացնում է այն անձին, որի նկատմամբ կայացվել է որոշումը և բացատրում այն բողոքարկելու նրա իրավունքը:

3. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ հանձնման թույլտվության կամ հանձնումը մերժելու վերաբերյալ և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի՝ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել վերաքննիչ դատարան որոշումները ստանալուց հետո՝ 10 օրվա ընթացքում, իսկ վերաքննիչ դատարանի որոշումները՝ վճռաբեկ դատարան դրանք ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում: Վերաքննիչ դատարանը և վճռաբեկ դատարանը գործը քննում և դրա վերաբերյալ որոշում են կայացնում համապատասխանաբար բողոքը ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում:

4. Սույն հոդվածի առաջին մասի 3-րդ կետով նախատեսված դեպքերում դատարանը գործը քննում և որոշում է կայացնում Հայաստանի Հանրապետության

արդարադատության նախարարի միջնորդությունը ստանալուց հետո՝ 10 օրվա ընթացքում:

Սույն հոդվածի առաջին մասի 3-րդ կետով նախատեսված դատարանի որոշումները կարող են բողոքարկվել և քննարկվել վերաքննության և վճռաբեկության կարգով սույն հոդվածի երրորդ մասով նախատեսված ժամկետներում:

5. Հանձնման թույլտվության կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշման բողոքարկման դեպքում այն կայացրած իրավասու մարմինը 3 օրվա ընթացքում դատարան է ուղարկում նշված որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը հաստատող փաստաթղթերը:

6. Առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում գործի քննությունն իրականացվում է այն անձի մասնակցությամբ, որի վերաբերյալ կայացվել է հանձնելու կամ հանձնումը մերժելու մասին որոշում, և (կամ) նրա պաշտպանի և դատախազի մասնակցությամբ:

Դատաքննության ընթացքում դատարանը չի քննարկում բողոքը բերած անձի մեղավորության հարցը՝ սահմանափակելով միայն հանձնման թույլտվության վերաբերյալ կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշման՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին և միջազգային պայմանագրերին համապատասխանության հարցի ստուգմամբ:

7. Ստուգման արդյունքում դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) բողոքը չբավարարել և հանձնման թույլտվության վերաբերյալ կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշումը թողնել անփոփոխ.

2) բավարարել բողոքը և վերացնել հանձնման թույլտվության վերաբերյալ կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշումը:

8. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով հանձնումը պայմանավորված է տվյալ պայմանագրի մասնակից համարվող պետության կողմից Հայաստանի Հանրապետությանը որևէ երաշխիք տալով, ապա այդ պետության

երաշխիքի՝ Հայաստանի Հանրապետության համար բավարար կամ ընդունելի լինելու հանգամանքը որոշում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը՝ մինչդատական վարույթի գործերով, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը՝ դատական վարույթում գտնվող և դատավճիռն ի կատար ածելու գործերով:

9. Եթե մերժվում է անձի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու հանձնելը օտարերկրյա պետությանը կամ միջազգային դատարան, սակայն սույն օրենսգրքով նախատեսված բավարար հիմքեր կան նրա նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու այն արարքի առնչությամբ, որի համար նրա հանձնման մասին խնդրանք է ուղարկվել օտարերկրյա պետությունից կամ միջազգային դատարանից, ապա Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը այդ անձի նկատմամբ սկսում է քրեական հետապնդում, իսկ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով նախատեսված դեպքերում և դրանով սահմանված կարգով համապատասխան քրեական հետապնդման վերաբերյալ գործը փոխառնում է օտարերկրյա պետության դատարանի կամ միջազգային դատարանի վարույթից և ընդունում է իր վարույթ այդ անձի նկատմամբ օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից հարուցված գործը՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրականացնելով համապատասխան քրեական հետապնդում:

***(479-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն, 07.07.06 ՀՕ-152-Ն)***

**Հոդված 480. Հանցագործություն կատարած անձին օտարերկրյա պետության կողմից Հայաստանի Հանրապետությանը հանձնելը**

1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով օտարերկրյա պետությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը կարող են հանձնվել Հայաստանի Հանրապետության տարածքում հանցանք կատարած և օտարերկրյա պետության տարածքում գտնվող անձինք՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կատարած հանցանքների համար նրանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով:

Նույն նպատակով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով, օտարերկրյա պետությունները Հայաստանի Հանրապետությանը կարող են հանձնել նաև տվյալ օտարերկրյա պետության տարածքում հանցագործություն կատարած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական հետապնդում իրականացնելիս կիրառվում են սույն օրենսգրքի կանոնները՝ համապատասխան միջազգային պայմանագրով նախատեսված բացառություններով:

3. Եթե օտարերկրյա պետությունը մերժում է հայցվող անձի հանձնումը Հայաստանի Հանրապետությանը, ապա դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը տվյալ միջազգային պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով իրենց վարույթում գտնվող գործը փոխանցում են համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմին՝ այդ անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով:

4. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով հանձնումը պայմանավորված է տվյալ պայմանագրի մասնակից համարվող պետությանը Հայաստանի Հանրապետության կողմից որևէ երաշխիք տալով, ապա այդ երաշխիքը տալիս է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը՝ մինչդատական վարույթի գործերով, վճռաբեկ դատարանը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ներկայացմամբ՝ դատական վարույթում գտնվող և դատավճիռն ի կատար ածելու գործերով:

***(480-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն, 07.07.06 ՀՕ-152-Ն)***

**Հոդված 481. Որպես վկա, տուժող, քաղաքացիական հայցվոր, քաղաքացիական պատասխանող, նրանց ներկայացուցիչներ, փորձագետ, մասնագետ՝ Հայաստանի Հանրապետություն կանչելը և դատավարական գործողություններ կատարելը**

Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող քրեական գործով որպես վկա, տուժող, քաղաքացիական պատասխանող, քաղաքացիական հայցվոր,

նրանց ներկայացուցիչներ, փորձագետ կամ մասնագետ հանդես եկող անձինք, ովքեր գտնվում են Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով և պայմաններով կարող են կանչվել Հայաստանի Հանրապետություն՝ համապատասխան քրեական գործով վարույթ իրականացնող դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի կողմից նրանց մասնակցությամբ անհրաժեշտ քննչական կամ դատական գործողություններ կատարելու համար:

Այդ անձանց մասնակցությամբ քննչական կամ դատական գործողություններ կատարելու ընթացքում կիրառվում են սույն օրենսգրքի կանոնները՝ համապատասխան միջազգային պայմանագրերով նախատեսված բացառություններով:

***(481-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

***(գլուխը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 482. Միջազգային պայմանագրերի բացակայության դեպքում իրավական օգնություն ցույց տալու պայմանները**

1. Օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության միջև քրեական գործերով դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ իրավական օգնություն ցույց տալու մասին միջազգային պայմանագրերի բացակայության դեպքում տվյալ պետության իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց (այսուհետ՝ իրավասու մարմիններ) և Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի միջև փոխադարձության հիման վրա իրավական օգնություն կարող է ցույց տրվել բացառիկ դեպքերում՝ տվյալ օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության միջև իրավական ոլորտում փոխադարձության հիման վրա փոխօգնություն ցույց տալու շուրջ դիվանագիտական ուղիներով ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, որը պետք է նախապես համաձայնեցված լինի՝

1) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հետ՝ դատական վարույթում գտնվող քրեական գործերով դատավարական գործողություններ կատարելու և դատավճիռն ի կատար ածելու առնչությամբ.

2) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հետ՝ մինչդատական վարույթում գտնվող գործերով դատավարական գործողություններ կատարելու առնչությամբ:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված կարգով տվյալ օտարերկրյա պետության իրավասու մարմինների և Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի միջև տվյալ պետության և Հայաստանի Հանրապետության միջև հաղորդակցությունը և փոխադարձ իրավական օգնություն ցույց տալը շարունակվում են մինչև համապատասխան հարցով (հարցերով) միջազգային պայմանագրի (պայմանագրերի) կնքումը կամ քրեական գործերով փոխադարձ իրավական օգնություն ցույց տալու մասին ուժի մեջ մտած բազմակողմ միջազգային պայմանագրին Հայաստանի Հանրապետության և տվյալ օտարերկրյա պետության երկուստեք մասնակից դառնալը, եթե մինչ այդ դիվանագիտական ուղիներով Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան պետությունը միակողմանիորեն կամ երկկողմ համաձայնությամբ չեն վերացրել փոխադարձության հիմունքներով իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունը:

3. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված կարգով փոխադարձության հիման վրա իրավական օգնությունը ցույց տալիս տվյալ օտարերկրյա պետության այլ մարմինների հետ Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը հաղորդակցվում են համապատասխանորեն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կամ գլխավոր դատախազության միջոցով՝ սույն օրենսգրքի 475-րդ հոդվածի կանոններին համապատասխան:

4. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով համապատասխան օտարերկրյա պետության իրավասու կենտրոնական մարմնին է տրամադրում սույն գլխի՝ այդ պետության համար ընդունելի լեզվով թարգմանված տեքստը՝ փոխադարձության կարգով իրավական օգնություն ցույց տալու ժամանակ օգտվելու համար՝ այդ պետությունից ստանալով նրա համապատասխան օրենքը:

***(482-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 483. Փոխադարձության կարգով իրավական օգնության մասին խնդրանքի բովանդակությունը**

1. Փոխադարձության կարգով օտարերկրյա պետության իրավասու մարմնին հասցեագրվող առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին հանձնարարությունը, հարցումը կամ խնդրանքը (այսուհետ՝ խնդրանք) պետք է կազմվեն գրավոր, ստորագրված լինեն ուղարկող պաշտոնատար անձի կողմից և հաստատված՝ Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազության, հետաքննության մարմնի պաշտոնական կնիքով:

2. Դատավարական գործողություններ կատարելու մասին իրավական օգնության վերաբերյալ խնդրանքը պետք է պարունակի՝

1) խնդրանքն ուղարկող Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի անվանումը (անունը).

2) օտարերկրյա պետության այն մարմնի անվանումը, որին ուղարկվում է խնդրանքը.

3) գործի անվանումը և խնդրանքի բնույթը.

4) տվյալներ այն անձանց մասին, որոնց կապակցությամբ ուղարկվում է խնդրանքը. անունը, հայրանունը և ազգանունը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը (հասցեն), քաղաքացիությունը, զբաղմունքի տեսակը, բնակության կամ գտնվելու վայրը, իրավաբանական անձանց համար՝ անվանումը և գտնվելու վայրը (հասցեն).

5) բացահայտման ենթակա հանգամանքների շարադրանքը, ինչպես նաև այն փաստաթղթերի, իրեղեն և այլ ապացույցների ցանկը, որոնք ակնկալվում է ստանալ խնդրանքը կատարողից.

6) տեղեկություններ՝ կատարված հանցանքի փաստական հանգամանքների, դրա որակման մասին, անհրաժեշտության դեպքում՝ տվյալ հանցագործությամբ պատճառված վնասի բնույթի և չափի մասին, ինչպես նաև խնդրանքն ուղարկողի մոտ առկա այլ տեղեկություններ, որոնք կարող են նպաստել խնդրանքի արդյունավետ կատարմանը:

*(483-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն)*

**Հոդված 484. Դատավարական գործողությունների վերաբերյալ խնդրանքի կատարումը**

1. Փոխադարձության հիման վրա քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ օտարերկրյա պետության իրավասու մարմնի ներկայացրած խնդրանքը Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը կատարում են սույն օրենսգրքի ընդհանուր կանոններով (1-53-րդ գլուխներ):

2. Եթե խնդրանքը չի կարող կատարվել, ապա ստացված փաստաթղթերը վերադարձվում են խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության իրավասու մարմին՝ նշելով դրա կատարմանը խոչընդոտող պատճառները:

Խնդրանքը չի կատարվում և ենթակա է վերադարձման, եթե դրա կատարումը կարող է վնասել Հայաստանի Հանրապետության անկախությունը, սահմանադրական կարգը, ինքնիշխանությունը կամ անվտանգությունը կամ հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

*(484-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն)*

**Հոդված 485. Քրեական հետապնդում սկսելու կամ շարունակելու համար գործի նյութերն օտարերկրյա պետություն ուղարկելը**

Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա պետության քաղաքացու կամ օտարերկրյա պետության տարածքում բնակության վայր ունեցող, քաղաքացիություն չունեցող անձի կողմից հանցագործություն կատարվելու և Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու դեպքում հարուցված կամ քննվող կամ հարուցման ենթակա գործի բոլոր նյութերը քրեական գործը վարող մարմինը սույն օրենսգրքի 475-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված համապատասխան իրավասու մարմնի միջոցով ուղարկում է տվյալ օտարերկրյա պետության համապատասխան մարմին՝ այդ պետության օրենսդրությանը համապատասխան՝ նշված անձանց նկատմամբ քրեական հետապնդում սկսելու կամ շարունակելու խնդրանքով:

Սույն հոդվածով նախատեսված գործի բոլոր փաստաթղթերի պատճենները պահվում են գործը վարող՝ Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի մոտ՝ այն իրեղեն ապացույցների ցանկի հետ, որոնք նույնպես ուղարկվել են համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմին:

***(485-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 486. Օտարերկրյա պետությունից ստացված քրեական հետապնդումը շարունակելու վերաբերյալ խնդրանքը կատարելը**

1. Օտարերկրյա պետության տարածքում հանցանք կատարած և Հայաստանի Հանրապետություն վերադարձած Հայաստանի Հանրապետության քաղաքացու նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու վերաբերյալ օտարերկրյա պետության իրավասու մարմնի խնդրանքը փոխանցվում է՝

1) Հայաստանի Հանրապետության իրավասու հետաքննության կամ քննչական մարմին՝ խնդրանքին կից ներկայացված նյութերի հիման վրա քրեական հետապնդում հարուցելու և գործը քննելու համար.

2) Հայաստանի Հանրապետության իրավասու դատախազին կամ դատարան՝ օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացու նկատմամբ արդեն իսկ հարուցված քրեական գործի նախաքննությունը կամ դատաքննությունը Հայաստանի Հանրապետության տարածքում շարունակելու համար:

2. Քրեական վարույթը Հայաստանի Հանրապետության տարածքում սկսելու կամ շարունակելու դեպքում օտարերկրյա պետության տարածքում գործի վերաբերյալ քննությամբ այդ պետության օրենքներով սահմանված և սույն օրենսգրքի պահանջներին չհակասող կարգով ձեռք բերված ապացույցներն ունեն տվյալ գործով Հայաստանի Հանրապետությունում ստացված ապացույցներին հավասար իրավաբանական ուժ:

Քննությունը Հայաստանի Հանրապետությունում իրականացնելու ընթացքում օտարերկրյա պետության իրավասու մարմնի ներկայացրած լրացուցիչ ապացույցները միացվում են գործում առկա մյուս ապացույցներին:

3. Հայաստանի Հանրապետությունում քրեական հետապնդում հարուցելու կամ հարուցված հետապնդումը շարունակելու՝ օտարերկրյա պետության իրավասու մարմնի խնդրանքին սույն հոդվածի առաջին մասով սահմանված կարգով ընթացք տալու մասին ծանուցվում է խնդրանքն ուղարկած տվյալ օտարերկրյա պետության իրավասու մարմինը:

***(486-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 487. Հանձնումը**

1. Հանցագործություն կատարած անձի հանձնման մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից խնդրանք ստանալու դեպքում Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը միջոցներ են ձեռնարկում սույն օրենսգրքի 479-րդ հոդվածով սահմանված կարգով խնդրանքում նշված անձի հանձնման թույլտվություն ստանալու և քրեական պատասխանատվության ենթարկելու կամ նրա նկատմամբ դատավճիռն ի կատար ածելու նպատակով այդ անձին օտարերկրյա պետությանը հանձնելու ուղղությամբ:

2. Քրեական պատասխանատվության ենթարկելու առնչությամբ հանձնելը կատարվում է այնպիսի արարքների համար, որոնք խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության օրենքներով համարվում են պատժելի, և որոնց կատարման համար նախատեսվում է պատիժ ազատազրկման ձևով՝ մեկ տարուց ոչ պակաս ժամկետով:

3. Դատավճիռն ի կատար ածելու առնչությամբ հանձնելը կատարվում է այնպիսի արարքների համար, որոնք խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության օրենքով համարվում են պատժելի, և որոնց կատարման համար անձը դատապարտվել է ազատազրկման վեց ամսից ոչ պակաս ժամկետով:

***(487-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն, փոփ. 07.07.06 ՀՕ-152-Ն)***

**Հոդված 488. Հանձնումը մերժելը**

1. Անձի հանձնման մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնի խնդրանքի կատարումը մերժվում է, եթե՝

1) հանձնման վերաբերյալ խնդրանքը Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի (սույն օրենսգրքի 475-րդ հոդվածի առաջին մաս) կողմից ստանալու պահին, խնդրանքը ներկայացնող օտարերկրյա պետության օրենքին համապատասխան, քրեական հետապնդում չի կարող հարուցվել, կամ դատավճիռը չի կարող ի կատար ածվել վաղեմության ժամկետն անցնելու պատճառով կամ այլ օրինական հիմքով.

2) անձի նկատմամբ նույն արարքի համար արդեն իսկ կայացվել է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ կամ գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում.

3) խնդրանքը վերաբերում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու հանձնմանը.

4) հանձնման դեպքում, տվյալ օտարերկրյա պետության օրենքներին համապատասխան, կարող է նշանակվել մահապատիժ, և այդ պետությունը բավարար երաշխիքներ չի տալիս առ այն, որ հանձնելու դեպքում այդպիսի պատիժ չի նշանակվի և չի կիրառվի:

2. Անձի հանձնման մասին խնդրանքի կատարումը կարող է մերժվել, եթե անձը, որի հանձնելը հայցվում է՝

1) սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում ձեռք է բերել քաղաքական ապաստանի իրավունք.

2) հետապնդվում է քաղաքական, ռասայական կամ կրոնական շարժառիթներով.

3) հետապնդվում է խաղաղ ժամանակ զինվորական հանցագործություն կատարելու համար.

4) հանցագործությունը կատարել է Հայաստանի Հանրապետության տարածքում:

Հանձնելը կարող է մերժվել նաև, եթե տվյալ օտարերկրյա պետությունը քրեական գործերով իրավական օգնության ոլորտում չի ապահովում փոխադարձությունը:

***(488-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 489. Հանձնելու մասին խնդրանքի բովանդակությունը**

1. Փոխադարձության կարգով իրավական օգնության շրջանակներում անձի հանձնման մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնի ներկայացրած խնդրանքը պետք է պարունակի՝

1) խնդրանքի հասցեատիրոջ՝ Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազության, քննչական կամ հետաքննության մարմնի անվանումը.

2) արարքի փաստական հանգամանքների նկարագրությունը և խնդրանքը ներկայացնող օտարերկրյա պետության օրենքի բնագիր տեքստը, որի հիման վրա այդ արարքը համարվում է հանցագործություն.

3) անձի անունը, հայրանունը և ազգանունը, որի հանձնումը հայցվում է, նրա քաղաքացիությունը, բնակության կամ գտնվելու վայրը (հասցեն) և հնարավորության դեպքում՝ նրա մասին այլ տվյալներ.

4) նշում հանցագործությամբ պատճառված վնասի չափի և խնդրանքն ուղարկելու պահի դրությամբ դրա հատուցման մասին:

2. Հանձնելու մասին խնդրանքին պետք է կցված լինի անձի կալանավորման մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնի որոշման հաստատված պատճենը:

3. Հայաստանի Հանրապետության տարածքում դատավճիռն ի կատար ածելու կամ պատժի չկրած մասը կրելու համար հանձնելու մասին խնդրանքին պետք է կցված լինեն օտարերկրյա պետության իրավասու դատարանի կայացրած դատավճռի հաստատված պատճենը՝ այն օրինական ուժի մեջ մտնելու մասին նշումով, և օտարերկրյա պետության քրեական օրենքի այն հոդվածը, որով տվյալ անձը դատապարտվել է: Եթե դատապարտյալն արդեն իսկ կրել է պատժի մի մասը, ապա հաղորդվում են նաև դրա մասին տվյալները:

*(489-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն)*

**Հոդված 490. Լրացուցիչ տեղեկությունները**

1. Եթե հանձնելու մասին պահանջը չի պարունակում բոլոր անհրաժեշտ տվյալները, ապա խնդրանքն ստացած Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը կարող են պահանջել լրացուցիչ տվյալներ և անհրաժեշտության դեպքում այդ տվյալներն ստանալու համար սահմանել մինչև մեկ ամիս ժամկետ:

2. Եթե խնդրանքը ներկայացրած օտարերկրյա պետության իրավասու մարմինը սույն հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում չի ներկայացնում լրացուցիչ տվյալներ, ապա խնդրանքն ստացած Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը պետք է ազատեն հանձնման ենթակա անձին, եթե նա խնդրանքին կից ուղարկված օտարերկրյա պետության իրավասու մարմնի կալանավորման մասին որոշման համաձայն և սույն օրենսգրքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի որոշման հիման վրա կալանավորված է եղել:

*(490-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն)*

**Հոդված 491. Հանձնելու համար կալանավորելը**

1. Անձին հանձնելու վերաբերյալ խնդրանքին կից նրան կալանքի վերցնելու մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնի որոշման (դրա պատճենի) առկայության դեպքում խնդրանքն ստացած Հայաստանի Հանրապետության դատախազը սույն օրենսգրքով սահմանված կարգով միջոցներ են ձեռնարկում հանձնման ենթակա անձին կալանավորելու համար, եթե հնարավոր չեն համարում խնդրանքի կատարումն առանց դրա:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքերում անձի կալանավորման մասին Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի որոշումը պետք է կայացվի հանձնման ենթակա անձի ներկայությամբ:

Եթե կալանավորման մասին Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի որոշումը կայացվել է առանց հանձնման ենթակա անձի ներկայության՝

նրա բացակայության կամ ներկա գտնվելուն խոչընդոտող այլ պատճառով, ապա նախքան այդ անձի հանձնելն իրականացնելը նա պետք է հնարավորություն ունենա բողոքարկելու դատարանի որոշումը վերադաս դատարան:

Սույն հոդվածի կանոնները չեն կիրառվում հանձնման ենթակա այն անձի նկատմամբ, որը նախքան հանձնման մասին խնդրանքն ստանալը սույն օրենսգրքով սահմանված կարգով պատիժ է կրում Հայաստանի Հանրապետության համապատասխան քրեակատարողական հիմնարկում:

Հայաստանի Հանրապետության դատարանի կողմից հանձնելու համար կալանավորման միջնորդության քննարկումը կատարվում է սույն օրենսգրքի 478.3 հոդվածի երրորդից յոթերորդ մասերով սահմանված կարգով:

***(491-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն, փոփ., լրաց. 19.03.12 ՀՕ-42-Ն)***

**Հոդված 492. Նախքան հանձնելու մասին խնդրանքն ստանալը կալանավորելը կամ ձերբակալելը**

1. Օտարերկրյա պետության իրավասու մարմնի միջնորդությամբ անձը կարող է Հայաստանի Հանրապետությունում կալանավորվել նաև մինչև հանձնելու մասին խնդրանքն ստանալը: Միջնորդության մեջ պետք է պարունակվեն հղումներ կալանքի վերցնելու մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնի որոշման կամ օրինական ուժի մեջ մտած դատավճռին՝ նշելով, որ տվյալ անձին հանձնելու մասին խնդրանքը կներկայացվի լրացուցիչ: Մինչև հանձնելու մասին խնդրանք ներկայացնելը անձին կալանավորելու մասին միջնորդությունը կարող է հանձնվել փոստով, այդ թվում՝ էլեկտրոնային կամ հեռագրով կամ տեխնիկական այլ միջոցներով, ինչպես նաև Միջազգային քրեական ոստիկանության (Ինտերպոլ) կամ անձի հետախուզում իրականացնող այլ միջազգային կազմակերպության միջոցով, որի մասնակից է Հայաստանի Հանրապետությունը:

2. Անձը կարող է սույն օրենսգրքով սահմանված կարգով ձերբակալվել առանց օտարերկրյա պետության իրավասու մարմնի միջնորդության կամ հանձնելու մասին խնդրանքի, եթե սույն օրենսգրքով նախատեսված հիմքեր կան կասկածելու, որ նա հանցագործություն է կատարել այն օտարերկրյա պետության տարածքում, որի հետ Հայաստանի Հանրապետությունը կապված է փոխադարձության կարգով քրեական

գործերով իրավական օգնություն ցույց տալու պայմանավորվածությամբ: Այդ պետության իրավասու մարմնի կողմից հանձնելու մասին խնդրանք ներկայացվելու դեպքում ձերբակալված անձը ենթակա է հանձնման:

3. Սույն հոդվածի առաջին և երկրորդ մասերով նախատեսված դեպքերում անձին կալանավորելիս կիրառվում են սույն օրենսգրքի 491-րդ հոդվածի երկրորդ մասի կանոնները, իսկ երկրորդ մասով նախատեսված դեպքում անձին ձերբակալելիս կիրառվում են սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոնները:

4. Սույն հոդվածի առաջին և երկրորդ մասերով նախատեսված դեպքերում կալանավորված կամ ձերբակալված անձի նկատմամբ համապատասխան խափանման միջոցի կիրառման մասին անմիջապես տեղյակ է պահվում օտարերկրյա պետության իրավասու մարմինը:

5. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված կարգով կալանավորված անձը պետք է ազատ արձակվի, եթե նրան հանձնելու խնդրանքը չի ստացվել կալանքի վերցնելու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում:

Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված կարգով ձերբակալված անձը պետք է ազատ արձակվի, եթե սույն օրենսգրքով ձերբակալման համար սահմանված ժամկետը լրանալու պահի դրությամբ համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնից նրա հանձնման մասին խնդրանքը կամ մինչև խնդրանքն ուղարկելը կալանավորման միջնորդությունը չներկայացվի:

Հանձնման մասին խնդրանքը կամ մինչև խնդրանքն ուղարկելը կալանավորման միջնորդությունը ստացվելու դեպքում կալանավորման առնչությամբ համապատասխանաբար կիրառվում են սույն օրենսգրքի 491-րդ հոդվածի կամ սույն հոդվածի առաջին մասի կանոնները:

***(492-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 493. Հանձնումը հետաձգելը, ժամանակավոր հանձնելը**

1. Եթե անձի նկատմամբ, որի հանձնումը խնդրվում է, Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական հետապնդում է հարուցված, կամ այդ

անձը Հայաստանի Հանրապետությունում դատապարտվել է այլ հանցագործության համար, ապա նրա հանձնումը կարող է հետաձգվել մինչև սույն օրենսգրքով սահմանված կարգով քրեական հետապնդումն ավարտելը, դատավճիռն ի կատար ածելը կամ պատժից ազատելը:

2. Եթե սույն հոդվածի առաջին մասով նախատեսված անձի հանձնման հետաձգումը կարող է հանգեցնել հանձնման մասին խնդրանքով դիմած օտարերկրյա պետության օրենքով սահմանված քրեական հետապնդման վաղեմության ժամկետն անցնելուն կամ վնաս պատճառել այդ պետությունում վարվող քննությանը, ապա այդ անձը կարող է հանձնվել ժամանակավոր:

Ժամանակավոր հանձնված անձը պետք է օտարերկրյա պետության կողմից վերադարձվի այնտեղ վարվող քրեական գործի վարույթով այն դատավարական գործողությունները կատարելուց հետո, որի համար նա հանձնվել է, բայց ոչ ուշ, քան հանձնելու օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում: Օտարերկրյա պետության իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի հիմնավորված խնդրանքի և դրա հետ Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի համաձայնվելու դեպքերում այդ ժամկետը կարող է երկարաձգվել, բայց մեկ ամսից ոչ ավելի ժամանակով:

3. Ժամանակավոր հանձնված անձի՝ օտարերկրյա պետությունում գտնվելու ժամանակամիջոցը հաշվակցվում է Հայաստանի Հանրապետությունում նրա նախնական կալանքի կամ պատժի կրման ժամկետին:

***(493-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 494. Հանձնելու մասին մի քանի խնդրանքների բավարարման կարգը**

1. Եթե միևնույն անձին հանձնելու մասին խնդրանքներ են ստացվել մի քանի պետություններից, ապա խնդրանքներն ստացած Հայաստանի Հանրապետության դատախազը կամ դատարանը ինքն է որոշում, թե դրանցից որը պետք է բավարարվի առաջին հերթին:

Ընդ որում, խնդրանքներից որևէ մեկն առաջին հերթին բավարարելու հարցը քննարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր հանգամանքները, հատկապես

հանցագործության ծանրությունը և կատարման վայրը, համապատասխան խնդրանքների կազմման տարին, ամիսը և ամսաթիվը, հանձնման ենթակա անձի քաղաքացիությունը և նրան փոխադարձության կարգով այլ պետության հետագա հանձնման հնարավորությունը:

2. Եթե միևնույն անձի հանձնման մասին խնդրանքներից բացի, հարցում կամ հարցումներ են ստացվել այն օտարերկրյա պետություններից կամ միջազգային կազմակերպություններից, որոնց հետ Հայաստանի Հանրապետությունը կապված է հանձնման հարցեր կարգավորող բազմակողմ կամ երկկողմ միջազգային պայմանագրերով, ապա հանձնման հարցը լուծելիս նախապատվությունը պետք է տրվի այդ պայմանագրերով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների կատարման ապահովմանը:

***(494-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 495. Հանձնումն իրականացնելը**

1. Անձի հանձնման մասին վերջնական որոշում ընդունելուց հետո համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմինը, որի հանձնման մասին խնդրանքը բավարարվել է, տեղյակ է պահվում անձի փաստացի հանձնման ժամանակի և տեղի մասին:

2. Եթե օտարերկրյա պետության իրավասու մարմինը, որին սույն հոդվածի առաջին մասով նախատեսված ծանուցումն ուղարկվել է, հանձնման ենթակա անձին չի ընդունում ծանուցմամբ սահմանված ժամկետից հետո՝ 15 օրվա ընթացքում, ապա այդ անձը, եթե նա մինչ այդ կալանավորված է եղել, ազատվում է կալանքից:

***(495-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 496. Կրկնակի հանձնելը**

Եթե հանձնված անձը խուսափում է տվյալ օտարերկրյա պետությունում իր նկատմամբ վարվող քրեական հետապնդումից կամ պատիժը կրելուց և վերադառնում է Հայաստանի Հանրապետության տարածք, ապա նույն օտարերկրյա պետության նոր խնդրանքով նա հանձնվում է առանց սույն օրենսգրքի 489-490-րդ հոդվածներով նախատեսված տեղեկություններն ու տվյալները ներկայացնելու, եթե

սույն օրենսգրքի 488-րդ հոդվածով նախատեսված հիմքեր չեն առաջացել հանձնումը մերժելու համար:

***(496-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 497. Տարանցիկ փոխադրման թույլտվությունը**

1. Փոխադարձության կարգով Հայաստանի Հանրապետության հետ իրավական օգնություն ցույց տվող օտարերկրյա պետության իրավասու մարմնի գրավոր միջնորդությամբ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը լուծում է Հայաստանի Հանրապետության տարածքով այն անձի փոխադրման վերաբերյալ թույլտվության հարցը, որի հանձնմանը համաձայնություն է տվել որևէ երրորդ պետություն:

Տարանցիկ փոխադրման թույլտվության վերաբերյալ միջնորդությունը քննվում է նույն կարգով, ինչ հանձնման մասին խնդրանքը:

2. Տարանցիկ փոխադրման թույլտվության դեպքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը միաժամանակ որոշում է փոխադրման եղանակը, որն առավել նպատակահարմար է գտնում (օդային, երկաթուղային կամ ավտոմոբիլային տրանսպորտով):

Տարանցիկ փոխադրման ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում կանգառ կատարելու դեպքում հանձնված անձը պետք է դուրս չգա համապատասխան տրանսպորտային միջոցից, իսկ դուրս գալու անհրաժեշտության դեպքում դա կարող է կատարվել բացառապես Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի նշանակած օպերատիվ խմբի վերահսկողությամբ և ժամկետով:

3. Հայաստանի Հանրապետությունը տարանցիկ փոխադրման համար թույլտվությունը կարող է մերժել, եթե՝

1) Հայաստանի Հանրապետության օրենքով հանցագործություն չի համարվում այն արարքը, որի համար խնդրվում է անձի հանձնումը.

2) հանձնման ենթակա անձը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է:

Տարանցումը չի թույլատրվում այն երկիր, որտեղ հանձնման ենթակա անձի կյանքին կամ ազատությանը կարող է վտանգ սպառնալ խոշտանգումների, դաժան կամ անմարդկային վերաբերմունքի, ազգային կամ ռասայական պատկանելության, կրոնի, քաղաքացիական կամ քաղաքական հայացքների պատճառով:

***(497-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 498. Քրեական հետապնդման պարտադիր լինելը**

1. Հայաստանի Հանրապետության դատախազը, դատարանը սույն գլխով սահմանված կարգով օտարերկրյա պետության իրավասու մարմնի ներկայացրած խնդրանքով, սույն օրենսգրքին համապատասխան, քրեական հետապնդում է իրականացնում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող այն անձանց նկատմամբ, որոնց հանձնումը մերժվել է, և որոնք կասկածվում են խնդրանքը ներկայացրած օտարերկրյա պետության տարածքում հանցանք կատարելու մեջ:

2. Եթե հանցագործությունը, որով հարուցված է քրեական գործ, առաջ է բերում հանցագործությունից վնաս կրած անձանց քաղաքացիաիրավական պահանջներ, ապա վնասը հատուցելու մասին նրանց միջնորդության առկայության դեպքում համապատասխան պահանջները քննվում են տվյալ գործով վարույթում՝ սույն օրենսգրքին համապատասխան:

***(498-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 499. Հանձնված անձի քրեական հետապնդման սահմանները**

1. Եթե սույն գլխի նորմերով սահմանված կարգով անձը Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի իրավասությանն է հանձնվել նրա նկատմամբ քրեական հետապնդում սկսելու կամ շարունակելու կամ դատավճիռն ի կատար ածելու համար, ապա առանց հանձնումը թույլատրած համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնության՝ այդ անձը չի կարող քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվել մինչև նրան հանձնելը կատարած այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել:

2. Առանց հանձնումը թույլատրած օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնության՝ հանձնված անձը չի կարող հանձնվել նաև երրորդ պետության:

3. Հանձնումը թույլատրած օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնությունը չի պահանջվում, եթե հանձնված անձը, լինելով օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ, իր նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում համապատասխան դատավարական գործողությունների կատարումն ավարտելուց, իսկ նրան դատապարտելու դեպքում՝ պատիժը կրելուց կամ օրենքով նախատեսված այլ հիմքերով պատժից վաղաժամկետ ազատվելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, չի լքում Հայաստանի Հանրապետության տարածքը, կամ եթե լքելուց հետո նա ինքնակամ վերադառնում է այնտեղ: Նշված ժամկետի մեջ չի հաշվակցվում այն ժամանակը, որի ընթացքում հանձնված անձը իրենից անկախ հանգամանքներով չէր կարող լքել Հայաստանի Հանրապետության տարածքը:

***(499-րդ հոդվածը խմբ. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 499[1]. Քրեական գործով վարույթ իրականացնելու խնդրանքը**

1. Փոխադարձության կարգով Հայաստանի Հանրապետության հետ կապված օտարերկրյա պետության իրավասու մարմնի՝ Հայաստանի Հանրապետությունում քրեական գործով վարույթ իրականացնելու մասին խնդրանքը պետք է բովանդակի՝

1) խնդրանքը ներկայացնող օտարերկրյա պետության իրավասու մարմնի անվանումը.

2) արարքի նկարագրությունը, որի առնչությամբ ուղարկվում է քրեական հետապնդում իրականացնելու մասին խնդրանքը.

3) արարքը կատարելու ժամանակի և տեղի մասին հնարավորինս ստույգ նշումներ.

4) խնդրանքը ներկայացնող օտարերկրյա պետության այն օրենքի բնագիր տեքստի պատճենը, որը տվյալ արարքը դիտում է որպես հանցագործություն, ինչպես նաև այն օրենսդրական նորմերի տեքստերի պատճենները, որոնք էական նշանակություն ունեն գործով վարույթի համար.

5) կասկածվող անձի անունը, հայրանունը և ազգանունը, քաղաքացիությունը, ինչպես նաև նրա մասին հայտնի այլ տվյալներ.

6) տվյալ հանցագործությամբ պատճառված վնասի չափի և խնդրանքն ուղարկելու պահին դրա հատուցման վիճակի մասին:

2. Խնդրանքին պետք է կցվեն խնդրանքը ներկայացնող օտարերկրյա պետության իրավասու մարմնի մոտ առկա ապացույցներն ու այլ նյութեր:

Գործում առկա բոլոր փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն համապատասխան պաշտոնատար անձի կողմից՝ նրա պաշտոնի նշումով, և հաստատված լինեն խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության իրավասու մարմնի զինանշանի պատկերով կնիքով:

***(499[1] -րդ հոդվածը լրաց. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 499[2]. Քրեական գործով վարույթի արդյունքների մասին տեղեկացնելը**

Քրեական հետապնդում իրականացնելու մասին խնդրանք ստացած Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության իրավասու մարմնին տեղեկացնում են տվյալ քրեական գործով ընդունված վերջնական որոշման մասին՝ ուղարկելով դրա հաստատված պատճենը:

***(499[2] -րդ հոդվածը լրաց. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 499[3]. Առարկաներ հանձնելը**

1. Փոխադարձության կարգով իրավական օգնություն ցույց տալու խնդրանքն ստացած Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը խնդրանքն ուղարկած օտարերկրյա իրավասու մարմնի միջնորդությամբ, առանց վնասելու իր կողմից վարվող քրեական գործի քննությանը, նրան են հանձնում այն առարկաները, որոնք՝

1) օգտագործվել են հանցանքը կատարելիս, այդ թվում՝ հանցագործության գործիքները, առարկաները, որոնք ձեռք են բերվել հանցավոր ճանապարհով, կամ

հանցագործն ստացել է որպես փոխհատուցում հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաների փոխարեն.

2) կարող են ունենալ ապացուցողական նշանակություն օտարերկրյա պետությունում վարվող քրեական գործով: Այդ առարկաները հանձնվում են նաև այն դեպքում, երբ հանցագործին հանձնելն անհնար է նրա մահվան, փախուստի կամ այլ պատճառներով:

2. Սույն հոդվածում նշված գործիքները, առարկաները օտարերկրյա պետության իրավասու մարմնին կարող են հանձնվել պայմանով, որ օտարերկրյա պետությունում վարվող քրեական գործով վարույթն ավարտելուց հետո անհապաղ վերադարձվեն դրանք հանձնած Հայաստանի Հանրապետության դատարան, դատախազին, քննիչին, հետաքննության մարմին:

3. Օտարերկրյա պետության իրավասու մարմին հանձնված գործիքների, առարկաների նկատմամբ երրորդ անձանց իրավունքները մնում են ուժի մեջ:

***(499³ -րդ հոդվածը լրաց. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 499⁴. Փոխադարձության հիման վրա իրավական օգնության հարցերով օտարերկրյա իրավասու մարմիններ դիմելու և դրա առնչությամբ ստացված նյութերի օգտագործման կարգը**

1. Փոխադարձության հիման վրա իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ խնդրանքը կազմելիս և օտարերկրյա պետության իրավասու մարմին ուղարկելիս Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը պահպանում են խնդրանքի ձևի և դրա ներկայացման վերաբերյալ տվյալ օտարերկրյա պետության օրենքով նախատեսված պահանջները, իսկ օտարերկրյա պետության օրենքի բացակայության դեպքում խնդրանքը կազմվում և օտարերկրյա պետության իրավասու մարմին է ուղարկվում սույն օրենսգրքի 483-րդ և 489-րդ հոդվածներով սահմանված ձևին և կարգին համապատասխան:

2. Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի խնդրանքը տվյալ օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից կատարվելու ընթացքում լրացուցիչ փաստաթղթերի, նյութերի, այդ

թվում՝ ապացույցների, առարկաների տրամադրումը Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի կողմից իրականացվում է օտարերկրյա պետության համապատասխան մարմնի հետ ձեռք բերված պայմանավորվածություններին և սույն գլխի դրույթներին համապատասխան:

3. Օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից խնդրանքի կատարման կապակցությամբ ստացված փաստաթղթերը, առարկաները, նյութերը, այդ թվում՝ ապացույցները, Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը օգտագործում են սույն օրենսգրքին համապատասխան:

Եթե օտարերկրյա պետության իրավասու մարմինը խնդրել է իր տրամադրած փաստաթղթերը, նյութերը կամ առարկաները վերադարձնել, ապա դա իրականացվում է նրա հետ ձեռք բերված պայմանավորվածություններին համապատասխան:

4. Եթե փոխադարձության հիման վրա իրավական օգնության արդյունքում տեղի է ունեցել հանցագործություն կատարած անձի հանձնում Հայաստանի Հանրապետությանը, ապա այդ անձի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվում կամ տվյալ օտարերկրյա պետությունում հարուցված հետապնդումը շարունակում են սույն օրենսգրքով իրավասու Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը՝ այդ անձի նկատմամբ իրականացնելով սույն օրենսգրքից բխող համապատասխան դատավարական գործողություններ:

Եթե օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից անձի հանձնումը պայմանավորված է նրա վերադարձումով այդ պետության տարածք, ապա դա իրականացվում է փոխադարձ պայմանավորվածությանը համապատասխան:

Ընդ որում, եթե հանձնումը պայմանավորված է անձին կալանքի տակ պահելու հանգամանքով, ապա նա Հայաստանի Հանրապետությունում սույն օրենսգրքով սահմանված կարգով կալանքի տակ կարող է պահվել այն ժամկետով, որի ընթացքում այդ անձը ենթակա է վերադարձման տվյալ օտարերկրյա պետության

տարածք: Այդ ժամկետը չի կարող գերազանցել նախնական կալանքի տակ պահելու համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետները:

5. Օտարերկրյա պետության իրավասու մարմնի խնդրանքով նրա կողմից վարվող քրեական գործով անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելիս, անձանց հանձնելիս, հանցագործության գործիքներ կամ իրեր փոխանցելիս Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը օտարերկրյա պետության իրավասու մարմնի ուշադրությունը պետք է հրավիրեն համապատասխան գործողություններն իրենց կողմից կատարվելու վերաբերյալ սույն գլխի համապատասխան կանոնների վրա:

***(499[4] -րդ հոդվածը լրաց. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 499[5]. Անձանց ներկայանալը Հայաստանի Հանրապետություն**

1. Փոխադարձության կարգով քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու շուրջ պայմանավորվածություններին համապատասխան՝ խնդրանքի հիման վրա Հայաստանի Հանրապետություն կարող են կանչվել Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի վարույթում գտնվող քրեական գործով որպես վկա, տուժող, քաղաքացիական պատասխանող, քաղաքացիական հայցվոր, նրանց ներկայացուցիչներ, փորձագետներ, մասնագետներ հանդես եկող այն անձինք (այսուհետ՝ այլ անձինք), ովքեր, լինելով Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, հայտնի է, որ գտնվում են այն օտարերկրյա պետության տարածքում, որի իրավասու մարմիններ համապատասխան խնդրանք է ուղարկվում:

2. Եթե այլ անձինք իրենց համաձայնությամբ և կամքով ներկայանում են Հայաստանի Հանրապետություն, ապա համապատասխան քրեական գործով հետապնդում իրականացնող դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը նրանց մասնակցությամբ համապատասխան դատավարական գործողությունները կատարում են սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ հետևյալ վերապահումներով. եթե ներկայացած այլ անձը օտարերկրյա պետության քաղաքացի է կամ նրա տարածքում, այդ պետության օրենքներին համապատասխան, բնակության վայր ունեցող քաղաքացիություն չունեցող անձ,

ապա նրա նկատմամբ արգելվում է կիրառել բերման ենթարկելու, դրամական տույժի, ինչպես նաև ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու կամ ակնհայտ սուտ ցուցմունքներ կամ եզրակացություն տալու համար քրեական պատասխանատվության ենթարկելու դատավարական գործողություններ:

3. Այլ անձինք Հայաստանի Հանրապետություն կարող են կանչվել և ներկայանալ իրենց ազատ կամքի արտահայտմամբ նաև իրենց գտնվելու պետության և Հայաստանի Հանրապետության միջև փոխադարձության շուրջ պայմանավորվածությունների բացակայության դեպքում:

Հայաստանի Հանրապետություն ներկայացած՝ սույն մասով նախատեսված այլ անձանց նկատմամբ նույնպես տարածվում են սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կանոնները:

***(499[5] -րդ հոդվածը լրաց. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

***(գլուխը խմբ., լրաց. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 499[6]. Միջազգային մարմինների հետ հաղորդակցվելու հիմքը**

1. Սույն օրենսգրքի իմաստով միջազգային մարմիններ են համարվում միջպետական, միջկառավարական կամ միջգերատեսչական միջազգային պայմանագրերով ստեղծված դատարանները կամ այլ այնպիսի մարմիններ, որոնց իրավասությունների մեջ են մտնում քրեական գործերով որոշակի դատավարական գործողությունների կատարումը և հանցավորության դեմ պայքարի գործում պետությունների ջանքերին օժանդակելը, նպաստելը, աջակցելը, ինչպես նաև քրեական պատիժներ նշանակելը և դրանք ի կատար ածման ներկայացնելը:

2. Միջազգային մարմինների հետ հարաբերությունները Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը իրականացնում են այդ մարմինների հիմնադրման (ստեղծման) մասին, դրանց լիազորությունները սահմանող միջազգային պայմանագրերին համապատասխան, որոնց մասնակից է Հայաստանի Հանրապետությունը:

Եթե Հայաստանի Հանրապետությունը մասնակից չէ միջազգային մարմնի հիմնադրման և դրանից բխող միջազգային պայմանագրերին, որոնք կարգավորում

են քրեական գործերով հարաբերությունների հարցերը, ապա այդ մարմինների հետ Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը հաղորդակցվում են տվյալ միջազգային մարմնի և Հայաստանի Հանրապետության միջև կնքված քրեական գործերով համագործակցության կամ օգնության մասին միջազգային պայմանագրին համապատասխան:

3. Եթե Հայաստանի Հանրապետությունը մասնակից է տվյալ միջազգային մարմնի ստեղծման կամ նրա լիազորությունները սահմանող մի քանի միջազգային պայմանագրերից ոչ բոլորին, ապա մյուս պայմանագրի (պայմանագրերի) դրույթները, որին Հայաստանի Հանրապետությունը մասնակից չէ, Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը կարող են կիրառել համապատասխան դատավարական գործողությունները կատարելիս, եթե դրանք չեն հակասում սույն օրենսգրքի և քրեական դատավարության նորմեր պարունակող այլ օրենքների պահանջներին:

***(499[6] -րդ հոդվածը լրաց. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 499[7]. Միջազգային մարմինների հետ հաղորդակցության և քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու կարգը**

1. Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը միջազգային մարմինների իրավասությունից բխող հարցերով իրավական օգնություն կամ առաջարկություն ցույց տալու հարցումներով նրանց դիմում և իրավական օգնությունը կամ աջակցությունը ստանում են սույն օրենսգրքի 499[6]-րդ հոդվածով նախատեսված պայմանագրերով սահմանված կարգին և պայմաններին համապատասխան:

Ընդ որում, տվյալ միջազգային մարմին համապատասխան հարցում ներկայացնելիս Հայաստանի Հանրապետության դատարանները դա իրականացնում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության միջոցով, իսկ դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջոցով, եթե

համապատասխան միջազգային պայմանագրով քրեական գործերով իրավական օգնության այլ կարգ սահմանված չէ:

2. Միջազգային մարմնի կողմից քրեական գործերով իրավական օգնություն կամ աջակցություն ցույց տալուն Հայաստանի Հանրապետության դատավորի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի (նրա ներկայացուցչի) մասնակցության հնարավորության դեպքում վերջիններս պարտավոր են տվյալ մարմնում գտնվելու ընթացքում կատարել սույն օրենսգրքից և այլ օրենքներից բխող իրենց վրա դրվող պարտականությունները՝ համապատասխան միջազգային պայմանագրերից բխող բացառություններով:

3. Միջազգային մարմնի հարցումները Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը կատարում են սույն օրենսգրքով նախատեսված կանոններին համապատասխան՝ միջազգային պայմանագրից բխող բացառություններով:

Եթե միջազգային մարմնի հարցումների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կատարվելիք դատավարական գործողություններին մասնակցելու համար Հայաստանի Հանրապետություն է ներկայանում միջազգային մարմնի իրավասու պաշտոնատար անձը, ապա նրա հետ Հայաստանի Հանրապետությունում հաղորդակցվելու կարգը և պայմանները որոշվում են այդ մարմնի լիազորություններին առնչվող միջազգային պայմանագրով, իսկ այդ պայմանագրով կարգ և պայմաններ սահմանված չլինելու դեպքում կիրառվում են հետևյալ կանոնները.

1) Հայաստանի Հանրապետության դատարանների հետ կապված դատավարական գործողությունների առնչությամբ միջազգային մարմնի պաշտոնատար անձը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին է ներկայացնում այն գործը և դրան առնչվող հարցերի շրջանակը, որոնք ենթակա են պարզաբանման կամ լուծման Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը որոշում է միջազգային մարմնի պաշտոնատար անձի ներկայացրած հարցերի

պարզաբանմանը կամ լուծմանը ներգրավվող Հայաստանի Հանրապետության դատարանը կամ դատարանները՝ սույն օրենսգրքի պահանջներին համապատասխան.

2) մինչդատական վարույթում գտնվող քրեական գործի հետ կապված դատավարական գործողությունների առնչությամբ միջազգային մարմնի պաշտոնատար անձը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին է ներկայացնում այն գործը և դրան առնչվող հարցերի շրջանակը, որոնք ենթակա են պարզաբանման և լուծման Հայաստանի Հանրապետության հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից:

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը որոշում է միջազգային մարմնի պաշտոնատար անձի ներկայացրած հարցերի պարզաբանման կամ լուծման համար պատասխանատու Հայաստանի Հանրապետության նախաքննության կամ հետաքննության մարմինը (մարմինները)՝ սույն օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Համապատասխան դատավարական գործողությունների ավարտից հետո՝ ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը համապատասխանորեն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին կամ գլխավոր դատախազին գրավոր ծանուցում են կատարված դատավարական գործողությունների մասին:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը իրենց իրավասությունների շրջանակներում համակարգում են համապատասխան դատավարական գործողությունների կատարմանը ներգրավված Հայաստանի Հանրապետության մարմինների և պաշտոնատար անձանց գործողությունները՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով իրավասու այլ պետական մարմինների պաշտոնատար անձանց:

***(499[7] -րդ հոդվածը լրաց. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

***(գլուխը լրաց. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 499[8]. Օտարերկրյա պետությունների դատավճիռների ճանաչումը Հայաստանի Հանրապետությունում**

1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա պետությունների դատարանների դատավճիռները ենթակա են ճանաչման Հայաստանի Հանրապետությունում:

2. Օտարերկրյա պետությունների դատարանների դատավճիռների՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու հիմքերը, ճանաչման ենթակա դատավճիռների (որոշումների) տեսակները սահմանվում են տվյալ պետության հետ կնքված կամ նրա մասնակցությամբ գործող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով:

3. Օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետությունում ճանաչում են՝

1) Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը, եթե ճանաչման ենթակա դատավճիռը կայացրել է օտարերկրյա պետության բարձրագույն դատական մարմինը.

2) Հայաստանի Հանրապետության քրեական վերաքննիչ դատարանը, եթե ճանաչման ենթակա դատավճիռը կայացրել է օտարերկրյա պետության իրավասու վերաքննիչ դատարանը.

3) Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանը՝ սույն օրենսգրքով սահմանված ընդդատությանը համապատասխան, եթե ճանաչման ենթակա դատավճիռը կայացրել է օտարերկրյա պետության առաջին ատյանի դատարանը:

4. Օտարերկրյա պետության դատարանի դատավճռի ճանաչման վերաբերյալ սույն հոդվածի երրորդ մասով իրավասու Հայաստանի Հանրապետության դատարանը որոշում է կայացնում:

Հայաստանի Հանրապետությունում ճանաչված օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը կատարվում է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսդրությանը, իսկ վնասի հատուցմանը և գույքային այլ

բռնագանձումներին վերաբերող մասով՝ Հայաստանի Հանրապետության դատական ակտերի հարկադիր կատարման մասին օրենսդրությանը համապատասխան՝ միջազգային պայմանագրերով նախատեսված բացառություններով:

***(499[8] -րդ հոդվածը լրաց. 14.12.04 ՀՕ-57-Ն, փոփ. 07.07.06 ՀՕ-152-Ն, 21.02.07 ՀՕ-93-Ն)***

**Հոդված 499[9]. Օտարերկրյա պետության դատարանի դատավճռի ճանաչման պայմանները և մերժման հիմքերը**

1. Օտարերկրյա պետության դատարանի դատավճռի ճանաչման վերաբերյալ որոշում կայացնելիս սույն օրենսգրքի 499[8]-րդ հոդվածի երրորդ մասով իրավասու Հայաստանի Հանրապետության դատարանները պարզում են, թե որքանով են պահպանված համապատասխան միջազգային պայմանագրով նախատեսված այն պայմանները, որոնք ճանաչման վերաբերյալ որոշում կայացնելու հիմք են:

Այդ պայմանների պահպանված լինելը, ինչպես նաև տվյալ միջազգային պայմանագրով դատավճռի ճանաչումը և կատարումը մերժելու հիմքերի բացակայությունը հիմք են օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու որոշում կայացնելու և ի կատար ածման ներկայացնելու համար:

2. Օտարերկրյա պետության դատարանի դատավճռի ճանաչումը կարող է մերժվել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված հիմքերով՝ նկատի ունենալով նաև կիրառվող միջազգային պայմանագրի վերաբերյալ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության արած հայտարարությունները կամ վերապահումները, ինչպես նաև, եթե՝

1) արարքը, որի համար անձը դատապարտվել է, Հայաստանի Հանրապետության օրենքով քրեորեն պատժելի չէ.

2) դատավճռով որպես պատիժ նախատեսված է մահապատիժ:

***(499[9] -րդ հոդվածը լրաց. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 499[10]. Միջազգային դատարանի դատավճիռը ճանաչելը և մերժելը**

1. Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ (մասնակցությամբ) գործող միջազգային դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետության տարածքում ենթակա է ճանաչման, եթե դա նախատեսված է այդ դատարանի հիմնադրման մասին կամ նրա իրավասությունը սահմանող այլ միջազգային պայմանագրով (պայմանագրերով):

Միջազգային դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու վերաբերյալ որոշում է կայացնում Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը՝ միջազգային դատարանի իրավասությունը սահմանող միջազգային պայմանագրով սահմանված կարգով:

2. Միջազգային դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում է այդ դատարանի իրավասությունը սահմանող միջազգային պայմանագրերով նախատեսված կարգով, և ճանաչումը կարող է մերժվել այդ պայմանագրով նախատեսված հիմքերով, ինչպես նաև սույն օրենսգրքի 499[9]-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դեպքերում:

3. Միջազգային դատարան է համարվում Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ (մասնակցությամբ) գործող այն միջպետական մարմինը, որն իր հիմնադրման կամ նրա լիազորությունները սահմանող այլ միջազգային պայմանագրով (պայմանագրերով) իրավասու է քրեական գործեր քննելու և դրանց վերաբերյալ դատավճիռ կայացնելու:

4. Միջազգային դատարանի դատավճիռների կատարումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսդրությանը, իսկ վնասի հատուցմանը և գույքային այլ բռնագանձումներին վերաբերող մասով՝ Հայաստանի Հանրապետության դատական ակտերի հարկադիր կատարման մասին օրենսդրությանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված բացառություններով:

***(499[10] -րդ հոդվածը լրաց. 14.12.04 ՀՕ-57-Ն, փոփ. 07.07.06 ՀՕ-152-Ն)***

**Հոդված 499[11]. Օտարերկրյա պետության դատարանի և միջազգային դատարանի դատավճռի ճանաչման իրավական հետևանքները**

Օտարերկրյա պետության դատարանի կամ միջազգային դատարանի դատավճռի ճանաչումը Հայաստանի Հանրապետության տարածքում առաջացնում է նույն իրավաբանական հետևանքները, ինչ կառաջացներ Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը:

***(499[11] -րդ հոդվածը լրաց. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 499[12]. Միջազգային դատարանի դատավճռի կատարումը առանց ճանաչման**

1. Եթե միջազգային դատարանի հիմնադիր կամ նրա իրավասությունը սահմանող այլ միջազգային պայմանագրով (պայմանագրով) նախատեսված է այդ դատարանի դատավճռի կատարում առանց ճանաչման, ապա այդ դատավճիռը տվյալ միջազգային դատարանի կանոնակարգերով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում ստանալուն պես ուղարկվում է համապատասխան քրեակատարողական հիմնարկ՝ ի կատար ածման:

2. Եթե տվյալ միջազգային դատարանի կանոնակարգով նախատեսված չէ նրա դատավճռի անմիջական կատարման կամ ճանաչման ձևով կատարման պարտականություն, ապա այդ դատավճռի հիման վրա, սույն օրենսգրքի 408[1]-րդ և 410[1]-րդ հոդվածներին համապատասխան, հարուցվում է գործի վերանայման վարույթ:

***(499[12] -րդ հոդվածը լրաց. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 499[13]. Միջազգային դատարանի դատավճռի կատարման իրավական հիմքերը և կարգը**

1. Միջազգային դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետության տարածքում կարող է կատարվել տվյալ դատարանի վերաբերյալ միջազգային պայմանագրերին Հայաստանի Հանրապետության մասնակից լինելու դեպքում:

2. Միջազգային դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետության տարածքում կարող է ի կատար ածվել նաև այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունում նման միջազգային պարտավորություն ստանձնած չլինելով հանդերձ՝ տվյալ դատարանի իրավասության շրջանակներում միջազգային դատարանի հետ գրավոր համաձայնություն է ձեռք բերել այդ դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետությունում ի կատար ածելու վերաբերյալ:

3. Միջազգային դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետության տարածքում ի կատար ածման է ներկայացվում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան և առանց դատավճիռը Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի կողմից ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելու, եթե նշված պարտավորություններով այլ բան նախատեսված չէ:

4. Միջազգային դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետության տարածքում ի կատար ածման նպատակով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը, Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների համաձայն՝ որոշում է քրեակատարողական այն հիմնարկը, որտեղ պետք է դատապարտված անձը կրի դատավճռով նշանակված պատիժը:

5. Միջազգային դատարանի դատավճռով Հայաստանի Հանրապետությունում պատիժ կրող անձի նկատմամբ գործում է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենքի ռեժիմը՝ միջազգային պայմանագրերով նախատեսված բացառություններով:

***(499[13] -րդ հոդվածը լրաց. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 499[14]. Օտարերկրյա պետության դատարանի կամ միջազգային դատարանի դատավճռի կատարման իրավական հետևանքները**

1. Օտարերկրյա պետության դատարանի կամ միջազգային դատարանի դատավճռի ի կատար ածման նկատմամբ գործում է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենքի ռեժիմը:

Պատիժ կրող անձի նկատմամբ այն առաջացնում է նույն իրավաբանական հետևանքները, ինչ կառաջանար, եթե տվյալ անձը դատապարտված լիներ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա իրավասու դատարանի կայացրած և օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

2. Օտարերկրյա պետության դատարանի կամ միջազգային դատարանի դատավճռով նշանակված պատիժը լրիվ կամ չկրած մասով Հայաստանի Հանրապետության տարածքում կրող անձը օգտվում է պատժից վաղաժամկետ ազատվելու այն իրավունքներից, որոնք բխում են Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերից, այդ թվում՝ ներման և համաներման իրավունքներից:

3. Պատժի լրիվ կամ դրա մի մասի կրումից կամ պատժից՝ սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված հիմքերով վաղաժամկետ ազատվելուց հետո անձը Հայաստանի Հանրապետության տարածքում կարող է գտնվել իր կարգավիճակին և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան (որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի, օտարերկրյա պետության քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ և այլն):

Միաժամանակ, եթե պատիժը կրած կամ պատժից վաղաժամկետ ազատված անձը Հայաստանի Հանրապետության քաղաքացի չէ և, ըստ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի, կարող է փոխանցվել որևէ օտարերկրյա պետության, որը պարտավոր է ընդունել նրան, կամ որևէ այլ պետության, որը համաձայնվել է ընդունել նրան, ապա այդ անձը իր համաձայնությամբ փոխանցվում է տվյալ պետությանը:

4. Եթե օտարերկրյա պետության դատարանի կամ միջազգային դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետության տարածքում ի կատար ածելու ընթացքում վերանայում է դրա իրավասությունն ունեցող օտարերկրյա պետության դատարանը կամ միջազգային դատարանը, ապա ի կատար ածումը դադարեցվում կամ շարունակվում է վերանայման արդյունքում կայացրած դատավճռին համապատասխան և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով:

5. Օտարերկրյա պետության դատարանի կամ միջազգային դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանը կարող է վերանայել բացառապես Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված դեպքերում:

***(499[14] -րդ հոդվածը լրաց. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

***(գլուխը լրաց. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

**Հոդված 499[15]. Միջազգային դատարան դիմելու իրավունքը**

1. Յուրաքանչյուր անձ, որ գտնում է, որ քրեական գործով սույն օրենսգրքով սահմանված կարգով ընդունված վերջնական դատական որոշմամբ իր նկատմամբ խախտվել են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված իրավունքները, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարան դիմելու իրավունք ունի՝ այդ դատարանի հիմնադրման մասին կամ նրա լիազորությունները սահմանող միջազգային պայմանագրերով (այսուհետ՝ միջազգային դատարանի կանոնակարգեր) սահմանված կարգով:

2. Սույն գլխի նպատակների համար վերջնական դատական որոշում է համարվում սույն օրենսգրքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատի կայացրած և 424-րդ հոդվածով սահմանված կարգով ուժի մեջ մտած որոշումը:

3. Միջազգային դատարան դիմելու իրավունքը ծագում է վերջնական դատական որոշման ուժի մեջ մտնելուց հետո՝ համապատասխան միջազգային դատարանի կանոնակարգերով սահմանված պահից: Անձն այդ իրավունքը կորցնում է միջազգային դատարանի կանոնակարգերով սահմանված դեպքերում և կարգով:

4. Միջազգային դատարան դիմելու իրավունք ունեցող անձանց շրջանակը սահմանվում է տվյալ միջազգային դատարանի կանոնակարգերով:

*(499[15] -րդ հոդվածը լրաց. 14.12.04 ՀՕ-57-Ն, փոփ. 07.07.06 ՀՕ-152-Ն)*

**Հոդված 499[16]. Միջազգային դատարան դիմելու կարգը**

1. Միջազգային դատարան դիմելու կարգը սահմանվում է համապատասխան միջազգային դատարանի կանոնակարգերով:

2. Անձը, որը մտադրություն ունի օգտվելու միջազգային դատարան դիմելու իրավունքից, ինչպես նաև նրա օրինական ներկայացուցիչը կամ ներկայացուցիչը իրավունք ունեն սույն օրենսգրքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանից, ինչպես նաև տվյալ գործով դատական ակտեր ընդունած Հայաստանի Հանրապետության մյուս դատարաններից ձեռք բերելու տվյալ գործին առնչվող փաստաթղթեր, դրանց պատճենները, լուսապատճենները, կատարել քաղվածքներ դրանցից:

3. Միջազգային դատարան դիմելու հետ կապված ծախսերը կրում է դիմողը, եթե այդ դատարանի կանոնակարգերով այլ բան նախատեսված չէ:

*(499[16] -րդ հոդվածը լրաց. 14.12.04 ՀՕ-57-Ն)*

**Հոդված 499[17]. Միջազգային դատարանին աջակցելու պարտականությունը**

1. Միջազգային դատարանի վարույթում գտնվող գործի հետ կապված հանգամանքներ պարզելու կամ լրացուցիչ ապացույցներ, փաստաթղթեր և այլ նյութեր ներկայացնելու վերաբերյալ այդ դատարանի ուղարկած հարցումներին Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը պատասխանում և անհրաժեշտ նյութերն ու փաստաթղթերը տրամադրում է համապատասխան հարցումն ստանալու օրվանից հետո՝ 15 օրվա ընթացքում, եթե միջազգային դատարանի կանոնակարգերով այլ ժամկետ սահմանված չէ:

2. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը աջակցություն է ցույց տալիս տվյալ գործով միջազգային դատարանին հետաքրքրող բոլոր հանգամանքների պարզաբանման համար՝ ելնելով Հայաստանի Հանրապետության դատարանների՝ տվյալ գործի քննության ընթացքում թույլ տված դատական

սխալները բացահայտելու և արդարադատության շահը մինչև վերջ պաշտպանելու անհրաժեշտությունից:

***(499[17] -րդ հոդվածը լրաց. 14.12.04 ՀՕ-57-Ն)***

***(գլուխը լրաց. 14.12.04 ՀՕ-57-Ն)***